

ԱՐԵՎՈՅՆԻ ԱՐԵՎԱՆ


# ՅԵՐԵՒԹ ՊԻԵՍ

ՄԱՐՎՈՂ ՃՐԱԳՆԵՐ  
ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ  
ՆԱՎԹԻ ՖԱՆՏԱՆ


1930

ՊԵՏՏՐԱՍ

ՅԵՐԵՎԱՆ



891. 981



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲԵԼՅԱՆ

# ՅԵՐԵՔ ՊԻԵՍ

A  $\frac{\pi}{70934}$

ՄԱՐՎՈՂ ՃՐԱԳՆԵՐ  
ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ  
ՆԱՎԹԻ ՖԱՆՏԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՒՆ.—ՅԵՐԵՔ. 1980


Հ. Ա 1535.

Դրամեզմալ Ա 5258 (բ).


Տիրած 3000-

---

Գետի առաջին առարկան. Վաղ արշակունյաց  
Պատվեր Ա 95.



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲԵԼՅԱՆ



## ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԵԵՐՈՒԻՆԻ ՀԱԿՈԲ—65 ա. նախկին արծաթագործ.

ԱՆՆԱ—նրա կինը ուրիշների համար կար անող.

ՄԱՐԹԱ—նրանց աղջիկը նույնպես կար անող.

ՆԵՐՍԵՍ—նրանց մեծ վորդին 27 ա. ծխախոտի գործարանում  
բանող.

ԵԵՐՈՒԲ—նրանց յերկրորդ վորդին թափառաշրջիկ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ—նրանց հարուստ հարևանի վորդին.

ՄԻՆԱՍ—սափրիչ և ժողովրդական բժիշկ:

## ԴՈՐԾՈՂ ՈՒԹՅՈՒՆ ԱԹԱԶԻՆ

ԲԵՄԸ ՆԵՐԿԱՅԱԳՆՈՒՄ և մի անշուր սենյակ։ ՄԵՋՏԵՂ մի  
դուռ։ Ազ կողմը յերկու դուռ, վորոնցից խորթինը տանում ե  
խոհանոց, մյուար քակը։ Ազ անկյունում մի հասարակ չթի վա-  
րագույր, վորի յետեվլում Մարթայի անկողինը։ Զախ կողմը մի  
պատուհան, հնամաշ չթի վարագույրով։ Պատուհանի աւազ մի  
սնդուկ՝ մեջը թեյի սպաս։ Նրանից քիչ հեռու պատրաստ  
սամավազը վրան դրած՝ մի սեղան։ Մի այլ սեղանի վրա վա-  
ռած լամպա։ ՄԵՋՏԵՂԻ դռան մոտ կախված ե ներսեսի վերար-  
կուն յեվ գդակը։ Այս ու այն կողմ հասարակ փայտե յներկած  
տարուրենտներ, վորոնցից մեկի վրա նոր կարած շորեր։

## ՏԵՍԻԼ 1

### Ա. Ե Խ Ա Վ Հ Ա Կ Ո Բ

ԱՆՆԱ.—('Եսամ ճրագի մոտ կար ե անում'). Որը լուսանալու  
վրա յե, իսկ նա չկա։ Ա՛խ, աստված, վորտե՞ղ մնաց նա։  
(Խփում ե բակաբային զանգի վեցը). Ժամի վեցն ե, դռնե  
շուտ լուսանար։ (Կանչում ե). Մարթա, չկշտացար քնից,  
վեր կաց։

ՀԱԿՈԲ.—(Մօնում ե միջին գոճից). Ցերեկի դեռ նա քաղցր քնի  
մեջ ե, Աննա։ Թող մի քիչ ել քնի յերեխան։ Ես գիշեր  
ներսեսը շատ հազեց, դու լսեցի՞ր նրա ձախնը։

**ԱՆՆԱ.**—Յես նրա ձայնից եմ փախել, Վո՞ր մալքը կարող է տանել ես ցավը, Մեկը հիվանդության ձեռքին և տանջվում, մլուսը զիշերը տուն չի գալիս:

**ՀԱԿՈԲ.**—Տեսնմամ ես, Աննա, ինչպիս յերես տվիր եղ անառակ զավակին:

**ԱՆՆԱ.**—Ախ, քիչ հանդիմանիր ինձ:

**ՀԱԿՈԲ.**—Մի ասիլ, Աննա, մեղքը քեզանումն եւ Յերբ յես Աստուրի հետ գնում ելի ոտարություն, միշտ ասում ելի քեզ, Աննա, ես յերեխան աչքիս լավ չի յերեսում, լավ նաևիք սրան, քանի փոքր և՝ հետո պահիր վատ ընկերներից, թե չե կմեծանա, հետո զժվար կլինի մեզ համար, Ամիր ինչու ելիր յես նրան ծեծելիս միշտ ճշալով մեջտեղ ընկնում և ձեռքից լիրում:

**ԱՆՆԱ.**—Քայլ չե վոր Ներսեսին չելիր ծեծում, ինչու նա լավ դուրս յեկավ, Սերորը վոչ:

**ՀԱԿՈԲ.**—Ի՞նչ ես ասում, եղպես ես միտքդ պահել: Զես հիշում, վոր են ժամանակ ամեն առավոտ յես նրան հետո տանում ելի արհեստանոցս և յերեկոներն ել վերադարձիս՝ յեկեցիցի, մինչեւ վոր 8 արգեկան դառավ, տվինք արհեստի:

**ԱՆՆԱ.**—Յես մեղավմբ ելի, վոր արհեստանոցդ հավաքեցիր:

**ՀԱԿՈԲ.**—Ի՞նչ անելի: Թաղաքը փոխվեց, կնանիքը իրանց տվին նոր-նոր շորերի, մեր շինածները զրին մի կողմ, նոր-նոր վարպետներ դուրս յեկան, հին վարպետներիս հացը կտրեցին, յես ել ստիպված յեղա գնալ ոտարություն:

**ԱՆՆԱ.**—Յեթե դու գնացիր ոտարություն, յես ել տանը ուրիշ կանանց նման ծամոն ծամելով չելի նստած:

**ՀԱԿՈԲ.**—Հա, իհարկե, դռն յել ժամանակ չունելիր: (Յեսթերը լեթ-նայեսով վրա տարացնելուվ): Եղպես ե, Անհաջ ջան, անտերանինամ մնացած յերեխաները միշտ փշանում են: Ո՞վ կասեր, վոր արծաթագործ Հակորը Սերորի նման անառակ զավակ պետք ե ունենար: Ի՞նչ ասեմ, Աննա, կարիքը մի կողմից, յերեխաների ես դրությունը մյուս կողմից ներսս և խորովում:

**ԱՆՆԱ.**—Գիշերը ցերեկ արած՝ 15 տարի յե գործում ենք, գործում, աչք ենք քոռացնում, բայց ենքան չենք կարողանում վաստակել, վոր գոնե մի որ կարողանանք մի կուշտ փորով հաց ուտել: Ժամը յերեքին եմ վեր կացել:

**ՀԱԿՈԲ.**—Աստված վողորմած ե, Աննա, հուկադ մի կտրիլ, դուցե-

- Նա մի որ հիշի մեզ. չե՞լ վոր յես գիշեր ցերեկ աղոթում եմ  
նրա առաջ (աղոթք և անում):
- ԱՆՆԱ.**—Ախ, չեմ իմանում, վժը մեղքներիս համար նու ել և  
խոռվ կացել մեր գլխին: Մեղա աստծո:
- ՀԱԿՈԲ.**—(Լոիկ): Հիվանդներին առողջություն, զրկվածներին  
ոգնություն...
- ԱՆՆԱ.**—(Վեր և կենում յեվ բառում պատուհանի վարագույ-  
րք, լուսանում ե): Փառք աստծո, լուսացավ, Մարթա,  
Ներսն, վեր կացեք, արդեն լուսացել ե, վորդիք:

## S E U H L 2

Հակոր, Աննա յել Մարք

- ՄԱՐԹԱ.**—(Վարագույրի յետիվից): Հայրիկ:
- ԱՆՆԱ.**—Շնուտ արա: (Պարապվում և թեյով):
- ՄԱՐԹԱ.**—(Վագում բօնում և հոր կուռք):
- ԱՆՆԱ.**—Մի խանգարիլ նրան, տեսնում ես, վոր մարդը աղոթք  
և անում:
- ՄԱՐԹԱ.**—Ինձ համար ել աղոթիր, հայրիկ: (Հակոբը պլխով և  
անում): Նա գլխով արավ:
- ԱՆՆԱ.**—Շնուտ արա գնա յերեսդ լվացիր: (Մարքան գնաց խո-  
հանոց):

## S E U H L 3

Աննա յել Հակոր

- ԱՆՆԱ.**—(Մի բանի անգամ սննուկից եանում և բաժակներ,  
հաց, օտքար յեվ այլն): Զգերջացրիր:
- ՀԱԿՈԲ.**—(Եերկու կրպմերին զլուխ օալով): Բարի լուլս: Դու  
ինձ հետ ելիք, Աննա, գուցե ուղում ես՝ ոգնեմ քեզ:
- ԱՆՆԱ.**—Վոյնչ հարկավոր չի, նստիր տաքացրիր:
- ՀԱԿՈԲ.**—Ամեն բան տեղն ե. Սերոբը բան-ման չի թոցրել:
- ԱՆՆԱ.**—Տես կարհղ ես, գնա ամենքին ել ասա, վոր մեր տղան  
գող ե:
- ՀԱԿՈԲ.**—(Ժպանով): Առանց իմ ասելու յել ճանաչում են նրան

թե ինչ պառւզն եւ ևսիր, Աննա, յերբ մենակ լինենք,  
միտո գցիր, քեզ բան ունեմ տաելու.  
ԱՆՆԱ.—Հ՞ը, ասա, ել մի վախեցնիր  
ՀԱԿՈԲ.—Չե, նրա մասին չե, ուրիշ բան ե.

## S E U H L 4

ԱՅԵԱ, Հակոբ յեկ Մարքա

ՄԱՐԹԱ.—Բարի լույս, հայրիկ! (ԹԱՅՈՎԱՄ և ԵՐԱ ՃԵՐՔ): ՏԵ՛ս  
ինչպես ցուրտ եւ մ, եղ թնչ ե, քո ձեռքդ ավելի սառն ե.  
ՀԱԿՈԲ.—Եպպես և աշխարհի բանը, Մարթա ջան, հիմա լես ինքս  
մի ձմեռն եմ:  
ՄԱՐԹԱ.—Խսկ յես թնչ եմ:  
ՀԱԿՈԲ.—Դու մի նախշուն գարուն ես, զու խսկ վոր մեր տան  
գարունն ես, մեր ուրախութիւննը:

## S E U H L 5

ԱՅԵԱ, Հակոբ, Մարքա յեկ Ներսիս

ՆԵՐՍԵՍ.—(ՄԱՅՈՎԱՄ և ՄԻԶԻՔ ՊԱՅԻՔ): Բարի լույս! (ՆԱ ԽՈՎԱՎԱՄ  
և ՀՈՐ-ՀՈՐ, բայց արագ):  
ՀԱԿՈԲ.—Դու իմ սիրելիս, լավ քնեցիր գիշերը:  
ՆԵՐՍԵՍ.—Գիշերը չե, հայրիկ բայց լույսի վրա շատ լավ! Ցեթե  
կարելի լիներ, յես ելի մի քիչ կքնելի... բայց հազը խան-  
գարում ե:  
ԱՆՆԱ.—Մարթա, թել շինիր նրա համար, Ցերեի մըսէլ ես:  
ՆԵՐՍԵՍ.—Ենքան ել տաք չեր իհարկե:  
ՀԱԿՈԲ.—(ԹԱՅՈՎԱՄ և ԵՐԱ ՃԵՐՔ): Վոչինչ, տաք ե:  
ՆԵՐՍԵՍ.—(ՓԱՅՍԱԼՈՎ): Այս, հայրիկ, տաք ե, ամբողջ մարմինս  
տաք ե, յես ալրվում եմ եղ տաքից (ԹԵՒ ԵԵ ԽԱՄՈՎԱՄ):  
ՀԱԿՈԲ.—Հույսդ ասածո վրա գիր, վորդի, մի վախիլ, կանցնի:  
ՆԵՐՍԵՍ.—Ցես եստեղ ինձ շատ լավ եմ զգում, բայց ենտեղ, են  
անպիտան ծխախոտի գործարանը ինձ չի ընկնում:  
ԱՆՆԱ.—Ցերեի ենտեղլողը վատ ե,  
ՆԵՐՍԵՍ.—Հըմ, ոդ, թնչ ոդ, ենտեղ ոդ չկա, մայրիկ! Ենտեղ կա  
միան ծխախոտի ծանը, թունավոր հոտ և ուրիշ վոչինչ,  
Շատ եմ զոր անում, բայց չեմ կարողանում տանել:

**ԱՆՆԱ.** — Գոնե պատուհանները բացելին:

**ՆԵՐՍԵՍ.** — Ո՛, եղ չի կարելի, վորովհետեւ տղերքը կարող են առանց բանդերովի ծխախոտ թոցնել:

**ԱՆՆԱ.** — Գոնե փոխվելիր մի ուրիշ բաժանմունք:

**ՆԵՐՍԵՍ.** — Եղ ել փորձեցի. խնդրեցի, վոր ինչ տանեն թղթի արկղներ շինելու բաժանմունք. բայց հետո յես ինքս ել տեսա, վոր բան չի դուրս գալ:

**ԱՆՆԱ.** — Եսքան տարի ծառայում ես, բնչ կլիներ, վոր խնդրեց կատարելին:

**ՆԵՐՍԵՍ.** — Բանը եղ չի, մալրիկ, ես բաժնում յես ստանում եմ որսկան 90 կոպեկ, իսկ ենտեղ ինձ շատ տան 30—35 կոպեկ:

**ԱՆՆԱ.** — Թեղ նման մեծ տղին 35 կոպեկ

**ՆԵՐՍԵՍ.** — Բանը մեծության մեջ չե, մալրիկ: Ծխախոտի գործարանում ամեն գործ վարձատրվում ե կամ հատով կամ կշռով: Թղթի արկղ շինելու համար յես պետք ե նորից աշակերտ մտնեմ, այնինչ՝ եստեղ յես արդեն վարպետ եմ և որը մի քանի հազար ծխախոտ եմ շինում:

**ՀԱԿՈԲ.** — Ազա ինչու եղքան քիչ վարձ ես ստանում:

**ՆԵՐՍԵՍ.** — Հենց բանն ել եղ ե, հայրիկ! Առավոտվանից շատ լավ եմ գործում. և որեկան յես կարող ելի մի ռուբլիկց ել ավել վաստակել... բայց դեպի տերեկո ուժու քշանում ե, սկըսում եմ թուլանալ և ել հարբածի նման գլուխս չեմ կարողանում ուսերիս վրա ուղիղ պահել. Ստիպված եմ լինում մի քիչ վաղ տուն վերադառնալ: Ցերկի Սերոբը չի յեկել ես գիշեր:

**ՀԱԿՈԲ.** — Թող կորչի նա. քիչ հիշեցեք նրա անունը:

**ԱՆՆԱ.** — Մի բարկանալ, նոր աղոթք արիր:

**ՀԱԿՈԲ.** — Խոռվ կենա իմ աղոթքը նրա գլխին:

**ՆԵՐՍԵՍ.** — Հարեւանիդ վորդուն չեմ տեսել, հայրիկ. լավ կլիներ, ես կիրակի ել մի քիչ գործ տար ինձ:

**ՀԱԿՈԲ.** — Ո՛, պարոն Միեթսանդրը շատ հավանել ե քո շինած ծխախոտը:

**ՆԵՐՍԵՍ.** — Յես հո նրա թամբաքուն չեմ փոխել: Մարթա, քո ձեռքից ինչ քաղցր եր թելը. Դու չես նեղանում, մայրիկ:

**ԱՆՆԱ.** — Ինչու պիտի նեղանամ, նա յել իմն ե:

**ՆԵՐՍԵՍ.** — Չե վոր մի ժամանակ դռւ ելիր մեր թել շինողը: Են ժամանակ ել յես եսպես հիվանդու ելի, մալրիկ:

**ԱՆՆԱ. — Եհ, ի՞նչ ես ասում, դու ենքան առողջ ելիր, վոր թփու-  
լիկ ելինք կոչում:**

**ՀԱԿՈԲ. — Կարմիր ելիր վարդի նման. Ասատուրը միշտ կամթում  
եր թշբց:**

**ՆԵՐՄԵՍ. — Ինարկե, վորովհետե մայրիկի կաթով ելի մեծացել:  
Եհ, ես իմ կերած խմածը ինձ մինչև ճաշ բավական ե. ես  
կտոր հացն ել մինչե լերեկու: (Վի կոոր հաց զնում և զբր-  
պանը, իոր ոգնությամբ եացնվում ե, մոռենում և զուր-  
անեաց գռան):** ԱՌ, ի՞նչ լավ ձկում ե լեկել (զնում ե):

**ՀԱԿՈԲ. — Առողջութիւն տնը իմ տան սլունին, Տեր:**

**ՄԱՐԹԱ. — (Ինքնայեւը անում և խոհանոց):**

## S E U T L 6

Աննա յել Հակոբ

**ԱՆՆԱ. — (Շարեր կապելով կապոցի մեջ): Քիչ տրորվիր, ժա-  
մանակ չունեմ: Ի՞նչ ելիր ուզում ասել:**

**ՀԱԿՈԲ. — Աննա, յես կամենում ելի քեզ ասել, վոր վարպետ  
Մինասը շատ լավ աղա յե: Մարթան նրա հետ բախտավոր  
կլինի. արի՝ լերեխալին տանք նրան:**

**ԱՆՆԱ. — Մեր զլիմից մի հարուստ փեսացուն կտրվել ե, ի՞նչ ե:  
Առանց են ել մեր տան մեջ նա մի բախտավոր որ չի տե-  
սել. ի՞նչն ե ստիպում մեզ վուազել: Փառք ասածո, մի աղ-  
ջիկ ունեմ, վոր գեղեցկությունում հանգը չկա:**

**ՀԱԿՈԲ. — Գիտես, Աննա, եղ բոլորը դու լավ ես ասում: Ճշմա-  
րիտ ե՝ վարպետ Մինասը հարուստ չե, բայց նա շատ բա-  
րի և քրիստոնյա. աղա յե: Մի ձեռքի ջուր ունի, վոր իսկի  
չեղած: Պետք ե տեսնել թե լերես վերանելուս նա ձեռքը  
ինչպես քնքուից ե շարժում: Յերբեմն, հավատացի՛ր, Անուշը  
ջան, յես ել եմ դալթակղվում և ուզում եմ միրուքս վեր  
անել տամ:**

**ԱՆՆԱ. — Ե՛ղ եր պակաս:**

**ՀԱԿՈԲ. — Բացի եղ մեկը. նա կարողանում ե բժշկություններ  
անել: (Վոսենալով): Նա շատ լերիտասարդների լե բժշկում  
զանազան հիվանդություններից: Նա ասում ե, քաղաքի-  
լերիտասարդների մեջ մեկն ել չկա առողջ:**

**ԱՆՆԱ. — Թող թեկուղ ի՞նչ ուզում ե լինի, յես քաղցածի մեկին,  
աղջիկ չունեմ տալու:**

**ՀԱԿՈԲ.**—Բայց ի՞նչ մեղք ե, յեթե նա քո ասած հարստությունը չունի: Չե վոր նայել մեզ նման մի մարդ ե:

**ԱՆՆԱ.**—Յես չեմ ասում, թե նա մեղնից վատ ե: Բայց դե սափերիշը ի՞նչ ե, վոր նրա ապրուստը ի՞նչ լինի: Հիմա տեսնում ես, վոր ամենքը փողի յետևից են վազ տալիս: Յո խելքդ են առաջվա ժամանակներին չգնա: Են վազ եր, վոր մեզի աշխատանքով ասսը մարդ եր ապրում: Փառք աստծո, հո աչքիդ առաջն ենք, հո տեսնում ես, յերեք հոգի գործում ենք, գործում, իսկ չորսին բավական չի լինում:

**ՀԱԿՈԲ.**—Ինարկե:

**ԱՆՆԱ.**—Եղ ի՞նչ ե մեր գրությունը: Մին տեղ դուրս գալու համար հագուստ չունենք, մի մարդ տուններս մտնի, առաջը դնելու բան չունենք, տերը մի արասցե, մեկներս հիվանդանա, բժշկի փող չունենք: Սա կլմնք ե:

**ՀԱԿՈԲ.**—Եղ մեկը ճշմարիտ ե, Աննա. սե որի համար վոչինչ չունենք, որ անում ենք, որ ուտում:

**ԱՆՆԱ.**—Իսկ դու դեռ ասում ես տանենք յերեխին մին սափրիչի չի տանք: Ի՞նչ որ, ի՞նչ քաղցրություն ե գտնելու նա նրա տան: Շատ-շատ, նա լել մեզ նման քաղցածի մեկն ե, ելի:

**ՀԱԿՈԲ.**—Յես վոչինչ չեմ ասում, Աննա. բայց քո եղ ասածներիցդ ել միզ ե մեզ վրա ուշք դարձնելու:

**ԱՆՆԱ.**—Ո՞վ ե իմանում: Կարելի է մի բախտի դուռ ել իմ յերեխիս՝ համար ե բացվելու:

**ՀԱԿՈԲ.**—Աստված տա, Աննա, յես միշտ նրան աղոթում եմ:

**ԱՆՆԱ.**—Մատի՛կ արա. յես ուշանում եմ. վհատքդ տնից դուրս չըդնես, մենակ չթողնես նրան: (Մածուկ): Նրա մոտ բերան չբացես: (Ուսերին օալ բցելով, կապոցը գրեց զլիթին ու զեաց աջ գունով):

## ՏԵՍԻԼ 7

Հակոբ յեվ Մարք

**ՄԱՐԹԱ.**—(Մօնում ե խօհանոցից յեվ արագ քերի սպասը հավերտմ յեվ զարում սնգուկի մեջ): Եղ ի՞նչ եյթը քչփը-չում մալրիկի հետ:

**ՀԱԿՈԲ.**—Վոչինչ, սիրելիս:

**ՄԱՐԹԱ.**—Ինձ խարել չես կարող:

**ՀԱԿՈԲ.** — Դու բարկացմծ ես իմ վրա:  
**ՄԱՐԹՈՆ.** — Իհարկե, վոչ:  
**ՀԱԿՈԲ.** — Ազա ինչ ես ուզում ասել:  
**ՄԱՐԹՈՆ.** — Այն, վոր ինչ վոր մտքումդ գրել ես, հանի՛ր:  
**ՀԱԿՈԲ.** — Ի՞նչ ասացիր:  
**ՄԱՐԹՈՆ.** — Այս, հանի՛ր և գեն քցիր, ավելորդ ե:  
**ՀԱԿՈԲ.** — Բայց դու հո գիտես, վոր յես միմիայն քո բախտավոռության մասին եմ մտածում:  
**ՄԱՐԹՈՆ.** — Հարկավոր չե: Խնդրում եմ, հայրիկ, թող եղ բանը:  
 Բախտավորությունը մեզ համար չի գրված:  
**ՀԱԿՈԲ.** — Բայց դու գեռ լիմ՛ր ինչ եմ ասում: Դու ճանաչեմ ես  
 սափրիչ Մինասին:  
**ՄԱՐԹՈՆ.** — Չեմ ճանաչում և անունն ել չեմ ուզում լսել:  
**ՀԱԿՈԲ.** — Դե լսվ: Չես ուզում՝ մի՛ ուզիր Ավելի լավ ե, զնամ  
 անսնեմ վորանեղ և մնացել ես գիշեր լեզրալրդ:  
**ՄԱՐԹՈՆ.** — Լավ մտիկ արա, ինձ մենակ ես թողնում: Հետո մայ-  
 րիկի ձեռքից չես պրծնիր:  
**ՀԱԿՈԲ.** — Բայց յես խսկուն կվերադառնամ. նայի՛ր, հետո նրան  
 չհայտնես, սիրելիս: (Գենում և մուտքի գոնով):  
**ՄԱՐԹՈՆ.** — (Դունից գուրս նայելով): Այս աստված, ելի նա յե.  
 (Փախչում նստում ե յեզ սկսում կար անել):

## S E U H L 8

Մարքա յեկ Ալիխանդր

**ԱԼԵՔՍ.** — (Մանում և մուտքի գոնից 2 արկդեմ ճեռիկ): Վոսկի  
 հարկանունի, կարելի յե շաբաթ ե, տուն եք հավաքում, յես  
 ձեզ կխանդարեմ:  
**ՄԱՐԹՈՆ.** — Վոչ. մենք յերեկոյան ենք տուն հավաքում: Համեցեք:  
**ԱԼԵՔՍ.** — (Սյու սեղանի վրա յե զնում արկդերը), Վոչ վոք չկան:  
**ՄԱՐԹՈՆ.** — Վոչ:  
**ԱԼԵՔՍ.** — (Մոսենալով): Զեռք չես տալիս. (Զեռք են սալիս):  
 Շատ ես վաստակում կար անելով:  
**ՄԱՐԹՈՆ.** — Ենքան, վոր ապրում ենք:  
**ԱԼԵՔՍ.** — Քեզ համար ես կարում:  
**ՄԱՐԹՈՆ.** — Վոչ, ուրիշի համար:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Բալց մի ձեռք շքեղ զգեստ քեզ ինչպես կսագեր: Դու  
չես նեղանալ, յեթե իս քեզ համար մի շորացու ընծա-  
բերեմ:

**ՄԱՐԹՈՒ.** — Եղ ի՞նչ բան ե: Ինչու համար դուք ինձ համար շո-  
րացու առնեք:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Ի՞նչ բան ե վոր: Այնքան ալդպես անողներ կան: Ի՞նչ  
գույն ես սիրում:

**ՄԱՐԹՈՒ.** — Յես վոչինչ չեմ ուզում: Շնորհակալ եմ:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Ի՞նչ ե նշանակում անփորձություն:

**ՄԱՐԹՈՒ.** — Յես հո չեմ կարող ծածուկ պահել, միևնույն ե, կի-  
մանան:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Իսկ մենք ալդ բանը հո ծածուկ չենք անի: Մի որ... այ-  
լերը սրբոցն Աննալի և Մարթալի տոնը կլինի, իս կմտնեմ  
և կշնորհավորեմ ձեր տոնը:

**ՄԱՐԹՈՒ.** — Վոչ. իսեր աստծո վոչինչ հարկավոր չե: Ինչպես յե-  
րեսում ե, դուք դեռ չեք ճանաչում իմ յեղբորը:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Վորին, են մլուսին: Եհ. Նրա նմաններին բավական ե-  
մի յերկու ուռելի գինու փող տաս, և նրանք իրանց ծնող-  
ներին ել կծախսեն:

**ՄԱՐԹՈՒ.** — Ախ, աստված մի արասցե նա եղ բաները լսի: Ավելի  
լավ ե, ուրիշ բաներ խոսեցեք: Ծխախոտներդ վերջացե՞լ ե:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Յես չեմ ծխում:

**ՄԱՐԹՈՒ.** — Զե՞ք ծխում: Ապա ինչու յեք յեղբորս ծխախոտ շինել  
տալիս:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Ասում եմ հարեանիս վորդին ե, գործ տամ:

**ՄԱՐԹՈՒ.** — Յերեկ դուք վախենում եք ծնողներից, վոր չեք ծ-  
խում:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Յես նրանց միակ վորդին եմ. նրանք յերեկ չեն հա-  
մարձկվում կպչել իմ քեֆին: Յես ապրում եմ իմ զվարճու-  
թյան համար: Զե՞ս ուզիլ մի անգամ քեզ ինձ հետ ցիրկ  
տանեմ:

**ՄԱՐԹՈՒ.** — Ի՞նչ եք ասում: Ինձ ովկ կթողնի, վոր յս վոտքս աը-  
նից գուրս դնեմ:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Բալց միթե հիմա հին ժամանակներն ե: Հիմա աղջիկն  
ել պետք ե ազատ լինի, ինչպես և տղամարդը:

**ՄԱՐԹՈՒ.** — Զեղ համար իհարկե եղանք ե. դուք ազատ եք:

**ԱԼԵՔԾՈՒ.** — Իմ ազատությունը իմ գժություններն են: Դու չես  
հարցնում, թե ի՞նչն ե սահպում ինձ գժություններ անել:

- ՄԱՐԹԱ.** — Ասացնք, ելի:
- ԱԼԵՔՍ.** — Դու կարծում ես հեղշտ և ասելը:
- ՄԱՐԹԱ.** — Դժվար ե:
- ԱԼԵՔՍ.** — Այ, դու ինքդ ասան: Այս մարդը չի ծխում. թնչ դործ ունի նա մեր տանը, թնչ ուժ և քաշում նրան ալսաեղ:
- Տեսնում ես. դու այդ գիտես. բայց չես ասիլ: Իմ սրախ մեջ ել շատ բան կա քեզ տաելու: Բայց չեմ կարողանում:
- Տանջվում եմ, համբերութիւնս կարվում ե... Գայլիս և լեզվիս ծայրին կանգնում, և այնուհետեւ յես համբի նման մնում եմ լեզուս կապված: Տեսնում եմ մի բան, հիանում եմ նրանով. նայում եմ նրա պատկերին և չեմ կշատանում:
- Յեվ վորովհետեւ լեզուս կապվում ե, յես սկսում եմ գծություններ անել և հարրել:
- ՄԱՐԹԱ.** — Ի՞նչ բաներ եք ասում. մինչեւ անգամ հարբում ել եք:
- ԱԼԵՔՍ.** — Ինչու համար ես զարմանում, չեղտ ե, վոր ինձ նման լերիսասարդը մի սրտի ընկեր չունենա:
- ՄԱՐԹԱ.** — Բայց կարծեմ ասացիք. «Կա մի բան, վորով հիանում եք»:
- ԱԼԵՔՍ.** — Այս, կա:
- ՄԱՐԹԱ.** — Իսկ թնչ և նա:
- ԱԼԵՔՍ.** — Այդ դու ինքդ ել գիտես: Յեթե իմ վոսկի հարեանուհուս հետաքրքրում և այդ բանը, ապա յես նրա առաջ կըացեմ իմ սիրաը:
- ՄԱՐԹԱ.** — Բացեցնք ելի, ով և իանգարում:
- ԱԼԵՔՍ.** — Բացեմ: Դու ինձից չես նեղանալ, յեթե յես քեզ մի ճշմարիս բան ասեմ:
- ՄԱՐԹԱ.** — Ճշմարիս բանից ինչու պիտի նեղանամ:
- ԱԼԵՔՍ.** — Իմ թանգազին Մարթա, յես քեզ սիրում եմ:
- ՄԱՐԹԱ.** — Ի՞նչ ասացիք:
- ԱԼԵՔՍ.** — Դու չելքը սպասում:
- ՄԱՐԹԱ.** — Այս. յես չելքի սպասում, վոր դուք յեկել եք մեզ ծաղրելու:
- ԱԼԵՔՍ.** — Մաղրելու. քեզ նման գեղեցիկ արարածին ծաղրելու:
- ՄԱՐԹԱ.** — Իհարկե՞ Միթե կարելի յե հավատալ:
- ԱԼԵՔՍ.** — Փորձել ես ինձ, վոր չհավատաս:
- ՄԱՐԹԱ.** — Ի՞նչ փորձել:
- ԱԼԵՔՍ.** — Իհարկե, քո աշքում մի սափրիչ Մինաս ավելի լավ ե, քան թե յես: Չե՞ վոր հալրդ նրան յերկինք և բարձրացնում:

**ՄԱՐԹԱ.** — Ի՞նչ եք ասում, յես բան չեմ հասկանում:

**ԱԼԵՔՍ.** — Վնաս չունի: Գնա նրան: Հմ, շատ լավ ապրուստ, բախտավորություն և պատիվ ե սպասում քեզ նրա տանը: Կիրակի առաջոտները նրա գլխին ջուր կածես, վոտները կրվանաս, շորերը կրվանաս... մի խոսքով, ի՞նչ խոսք, վոր սրանից հազար անգամ լավ կապրես:

**ՄԱՐԹԱ.** — Դուք շատ բան ասացիք, իսկ յես վոչինչ չհասկացա:

**ԱԼԵՔՍ.** — Իհարկե, չհասկանալու դիր քեզ, Մժւտ ե, վոր քեզ սափրիչ Մինասին են տալու:

**ՄԱՐԹԱ.** — Յեթե ուղղողը յես եմ, յես բան չեմ իմանում:

**ԱԼԵՔՍ.** — Իսկ յեթե քեզ հարցնելին, մեր յերկուսից վորին ես ավելի հավանում, ի՞նչ կպատասխանելիք:

**ՄԱՐԹԱ.** — Յես վոչինչ չգիտեմ, յես կհարցնեմ իմ մորս:

**ԱԼԵՔՍ.** — (Խողմ): Սա բոլորովին յերեխա յե: Բայց չե վոր մինչև մեր ծնողները, մենք պետք ե իրար հետ ծանոթ լինենք, իրար հետ ծածուկ տեսություններ անենք: Մենք հո ժամանակից յետ մնալ չենք կարող: Այ, յեթե դու ինձ սիրելիք, յես քեզ կասելի, թե ինչ պետք ե անենք: Միրում ես ինձ:

**ՄԱՐԹԱ.** — Ասացեք ելի:

**ԱԼԵՔՍ.** — Մարթա, խոսք տուր, վոր յերբ կլսես իմ ձաւնը, կդասինձ հետ ծածուկ տեսության: Ախ, այնտեղ յես կբացեմ իմ լեզուն, այնտեղ դու կիմանաս, թե ինչքան եմ տանջվել քո սիրով:

**ՄԱՐԹԱ.** — Հետո, յնետո:

**ԱԼԵՔՍ.** — Խոսք տուր, վոր կմերժես այդ սափրիչին: Թե չե յերդվում եմ քո սիրով, այդ նրան եժան չի նստի, յես նրան կվոչնչացնեմ:

**ՄԱՐԹԱ.** — Լավ, լավ, բավական ե, խոսք եմ տալիս:

## ՏԵՍԻԼ 9

Ալեքսանդր, Մարտա յեվ Հակոբ

**ՀԱԿՈԲ.** — (Մօճառմ և մուօթի գոնից): Ախ, պարո՞ն Ալեքսանդր, եղ դժւշ եք: Յերևի ծխախոտներդ վերջացել ե:

**ԱԼԵՔՍ.** — Ախ, թնդ վարպետ ներսեսը ինձ համար վազը ծխախոտ պատրաստի:

- ՀԱԿՈԲ.**—Շատ լավ, Վերջացնի, իսու կրերեմ։  
**ԱԼԵՔՍ.**—Ի՞նչ հարկավոր ե ձեզ նեղություն տալ, վարպետ Հակոբ, իսու ինքս կզամ։  
**ՀԱԿՈԲ.**—Ասաված որհնի ձեզ ձեր բարության փոխարեն, վորդի։  
**ԱԼԵՔՍ.**—Մյուս արկղն ել կանֆեաներ են որիորդ Մարթուի համար Մնաք բարեւ։ (Գնաց աշ)։  
**ՀԱԿՈԲ.**—Գնաք բարեւ։ Տեսնում ես, Մարթա, բարի մարդիկ պահան աշխարհում։

## S E U T L 10

Հակոբ յեկ Մարթա

- ՀԱԿՈԲ.**—Շալդ ուսերիդ գցիր, Մարթա։  
**ՄԱՐԹԱ.**—Ինձ համար տաք ե. իսու չեմ մըսում։ (Կարում ե)։  
**ՀԱԿՈԲ.**—Իսկ իսու սուսանց վերաբեկի մըսում եմ. կուզես, Մարթա, քանի մակրդ տանը չե, իսու քեզ համար կարդամ բանին աստծո խոսքը։  
**ՄԱՐԹԱ.**—Կարդամ։  
**ՀԱԿՈԲ.**—Իմ թանգագին Մարթա. իսու քեզ շատ եմ սիրում. դու սիրում ես ինձ ականջ դնել։  
**ՄԱՐԹԱ.**—Հենց դրմ համար ես սիրում։  
**ՀԱԿՈԲ.**—Զե հոգիս. և նրա համար, վոր դռւ լել ես տան աշխատավորներից մեկն ես. Գուցե ես ամառը լնս ել կարողանամ մի գործի կազմել. Զեմ հասկանում, ինչու լեմ եսքան թուլլ։  
**ՄԱՐԹԱ.**—Յերկի շատ ես չարչարվել կյանքումդ։  
**ՀԱԿՈԲ.**—Ենքան. Մի անգամ ձիախառն գեան ե քշել ինձ, մի անգամ ել Ասատուրի հետ ձլունի տակ եմ գիշերել։  
**ՄԱՐԹԱ.**—Ավելի լավ ե եղպես բաներ պատմես, հայրիկ. թե չե կարդացածիցդ լես վոչինչ չեմ հասկանում։  
**ՀԱԿՈԲ.**—Ասենք լես ել ենքան չեմ հասկանում. Պետք ե ասել, շատ խրթին են գրում. Որինակ, մի տեղ ասված ե. «Դշիշուն հարավու հարիցե հավուրն գատաստանի»։ բայց լես չեմ հասկանում եղ զշխոները ինչ գործ ունեն սրա մեջ. իսկ եստեղ (ցույց ե ամիս զիրք) պարզ ասված ե. «Մավուղ, Մավուղ, զի՞ հալածես զիսա»։ Շատ քաղցր խոսքեր են, Մարթա. իսկ դու ինչու չես մեջքդ ծածկում, դու կարող ես մըսել. Ուր ե շալդ. լերկի անզգանի ե տարել. իսկ դուք

ինձանից ծածկում եք: Սպասեք, իս կհայտնեմ պալեցիալին, թե չե նա մեզ բոլորովին կքանդի:

**ՄԱՐԹԱ.**— Մի բարկանալ, հայրիկ: Ապա դու ասում ելիր, վոր սիրում ես քաջ մարդկանց. չե վոր Սերորն ել քաջ եւ:

**ՀԱԿՈԲ.**— Բայց իմ ինչին ե պետք նրա քաջությունը: Թաջ ե, թող նա իր քաջությունը տանի մի ուրիշ լավ բանի մեջ ցուց տա և վոչ թե մեզ պես զրկվածի վերջին պատառը դողանա: (Վերկենալով): Ախ փչացած, ախ անզգամ, իս քեզ ցուց կտամ:

## S E U H L 11

Հակոբ, Մարքա յեկ Սերոբ

**ՍԵՐՈԲ.**— (Աշ գոճից օալը ուսերին մօավ): Կեցցե հայրիկ, կեցցե: Տաք-տաք խրսիր, վոր չմրսես, թե չե դրսում փափուկ ցուրտ եւ:

**ՀԱԿՈԲ.**— Ի՞նչու՞նես նրա շալը վերցրել. տուր ես ըոպելիս, տուր, ասում եմ:

**ՍԵՐՈԲ.**— (Նրելով նրան): Սպասիր, ծերուկ: Դու տեսնում ես, վոր իս խղճացել եմ նրան և յետ բերել. (Շուշ զցում ե Մարքայի վրա):

**ՀԱԿՈԲ.**— Մարթա, դու տեսմը, ինձ ինձ վրա ձեռք բարձրացրեց:

**ՄԱՐԹԱ.**— Ինչպիս ես համարձակվում հայրիկի վրա ձեռք բարձրացնել:

**ՍԵՐՈԲ.**— Վոչինչ, նա ճիպոտի տակ ինձ շատ ե ճղճղացրել: Ինչպիս ե. տեսնմամ ես: Բանը վոր ուժի ընկավ, ինձ վոչինչ չես կարող անել: Չես իմանում, վոր պառավը յերեխաւացել ե, իսկ յերեխան (կրծքին խփելով) տղամարդ ե դառել:

**ՀԱԿՈԲ.**— Մի պարծենալ կրծքովդ, քեզից պակաս տղամարդ չեմ յեղել յես: Հարցըն Ասատուրին: Պարծեցիր մի լավ բանով: Ավելի լավ ե ամաչես, տափը մտնես: Ո՞վ ե տեսել, վոր քեզ նման տղամարդը անգործ թափառի:

**ՍԵՐՈԲ.**— Ինչմւ ուսում չտվիր, վոր իս ել խելոք տղա դուրս գալի:

**ՀԱԿՈԲ.**— Միթե ամենքը ուսում ունեն: Միթե ներսեսը ուսում

ունի: Գոնե մի ձիու չափ ել չկաս: Ձին բանում և և  
ուսում, իսկ դժւ:

ՍԵՐՈԲ.— Ա՛, ուրեմն դու ուզում ես, վոր լես մի ձի դառնամ:  
ՀԱԿՈԲ.— Ուզում եմ, վոր մարդ դառնաս:

ՍԵՐՈԲ.— Պարզ ասա, կուզելիք ինձնից թնչ լիներ քեզ համար:

ՀԱԿՈԲ.— Յես ինձ համար չեմ ասում, այլ քեզ համար: Միենունն  
ե, մենք վազը մյուս որը զներզման ենք մտնելու, ով պետք  
ե վառ պահի մեր տան կրակը, (հուզված) ես մարվող ճը-  
րագը:

ՍԵՐՈԲ.— Դու կարծում ես իմ նմանները նամուս չունեն, վո-  
չինչ չեն մտածում:

ՀԱԿՈԲ.— Ասա ինձ, թնչ են մտածում նրանք:

ՍԵՐՈԲ.— Բայց դուք կարծում եք, վոր լսթե լես ել ներսեսի  
պես մի կտոր ցամաք հացի համար գնալի մի թամբաքուի  
ֆարբիկում վոսկոռ փթեցնելի, կյանք մաշեցնելի, լես  
ել լավ մարդ կզառնալի: Բայց եղ սխալ ե:

ՀԱԿՈԲ.— Յես հո քեզ անպատճառ թամբաքուի գործարան չեմ  
ասում:

ՍԵՐՈԲ.— Բայց չե՞ վոր, ուր ել գնաս, ինչ վոր ել անես, ելի  
մի կտոր հացի համար ես անելու: Վերջապես չե՞ վոր քո  
ասած եղ ձիի և մարդի մեջ մի զանազանություն պետք ե  
լինի:

ՀԱԿՈԲ.— Հետո:

ՍԵՐՈԲ.— Հետո են, վոր դու ուզում ես, լես մի ձի դառնամ,  
իսկ լես եղ բանը չեմ կարող:

ՀԱԿՈԲ.— Ուրեմն մենք վոր բան ենք անում, մմրդ չենք:

ՍԵՐՈԲ.— Հենց բանն ել եղ ե, վոր մարդ ենք, բայց միմյանց  
նման չենք: Սրա համար ել դու բանին ասածո խոսքի մեջ  
ես հանգստություն գտնում: մեկը ձիու նման բան անելու  
մեջ, իսկ լես մի ուրիշ բանի մեջ:

ՀԱԿՈԲ.— Իսկ դու, պարզ ասա, շարլատանության մեջ:

ՍԵՐՈԲ.— Վնաս չունի. թող քո ասածդ լինի: Զե՞ս ուզում շար-  
լատաններ լինեն, փոխի կրանքը: Թող ամենքը ձի դառ-  
նան, աշքիս վրա, լես ել ձի կրառնամ: Բայց վոր լես ձի  
դառնամ ուզիշները իմ մեջքին նստելու համար, եղ մեկը  
կներես, լես չեմ կարող:

ՀԱԿՈԲ.— Բայց մթթե մենք կարող ենք կրանքը փոխել Ամեն  
ինչ նրա ձեռքին ե, նա լե տնորինում մեր վիճակը:

**ՍԵՐՈԲ.** — Սուտ եւ նա վոչինչ բանից տեղեկություն չունի։  
Մենք ինքներս ենք ամեն բան մեր սրտի ուզածի պես  
ծռում։

**ՀԱԿՈԲ.** — Մոժւմ, մենք! Մարթա, լսմամ ես, ինչպես նա մեղան-  
չում եւ։

**ՍԵՐՈԲ.** — Այ, գուք ամենքդ ել եղպես եք! Յերբ մարդս ուզում  
ե մի ճշմարիո բան անել, ծռուը ուզգել, գուք իսկուն ձալ-  
ներդ գլխներիդ եք զցում, թե շառլատան և նա, խառնա-  
կիչ և նայ։ Բայց չե՞ վոր պետք ե մի նրան ել լսել, թե  
ինչո՞ւ յե նա եղպես։

**ՀԱԿՈԲ.** — Ի՞նչ ասեմ։ (Մօթի գնալով) Ինձ թվում ե թե քո ա-  
սածներիդ մեջ միտք կա, թվում ե վոր և դատարկ խոս-  
քեր են։

**ՍԵՐՈԲ.** — Իսկ ինչ վոր քեզ թվում ե միայն, ինձ համար պարզ  
ե աստծո լուսի պես։

**ՀԱԿՈԲ.** — Յես միայն մի բան կուզելի, աղոթելով զարթնելիր  
քնից, առավոտից մինչև յերեկո քրտինք թափելիր, և ան-  
կողին մտնելիր աղոթելուց հետո, վորպեսզի իմանալիր ին-  
չի մեջն ե կլանքի քաղցրությունը։

**ՍԵՐՈԲ.** — Հնացած բաներ... Յես քեզ ասում եմ չեմ կարող, չեմ  
կարող։

**ՀԱԿՈԲ.** — Փուչ անպիտան. դու միայն են կարող ես, վոր տան  
մեջ վոյինչ չես թողնում, ամեն ինչ գողանում ես։ Մպասիր,  
տես յես ինչպես կհալտնեմ պալիցիականներին։

**ՍԵՐՈԲ.** — Իզուր նեղություն կքաշես. նրանք առանց քո ասելու  
յել ինձ լավ են ճանաչում։

**ՄԱՐԹԱ.** — Վորտեղից են ճանաչում, ապեր։

**ՍԵՐՈԲ.** — Վոչինչ, մի քանի գիշեր նրանց մոտ հյուր եմ յեղել  
հրավիրված։ Ավելի լավ ե բանին աստծո խոսքերից կար-  
դա, ականջ դնենք։

**ՀԱԿՈԲ.** — Յեթե դու ուզում ես աստծո ճանապարհին գալ, յես  
կկարդամ։

**ՍԵՐՈԲ.** — (Մինչ Հակոբը գիրքը կրերը) Զայ խմել վերջաց-  
րել եք։

**ՄԱՐԹԱ.** — Ներ հավաքեցինք։

**ՍԵՐՈԲ.** — Մալրիկը տանը չե։

**ՄԱՐԹԱ.** — Շորեր ե տարել։ Վորտեղ ես յեղել գիշերը, ապեր։

**ՍԵՐՈԲ.** — Գարման շինող Գավրուշի խանութի յետեսում։ Պետք

և ասել ենտեղ ել շատ տաք չերւ Հա, հետմ, հայրիկ, Կուռունիի ի հարցութեալեալեալը գնաց Յերուսաղեմ... (Մանում և վարագույրի յետեվը):

ՀԱԿՈԲ.— Մի մանիլ ենտեղ:

ՄԱՐԹՈՆ.— (Մածուկ): Մի վախիլ, ենտեղ վոչինչ չկա:

ՀԱԿՈԲ.— Դուքս յեկ ենտեղից: (Հարձակվում և վրան, վարագույրի յետեվում յերեվում ե, զոր իրաց երում են): Դու իրավունք չունես:

ՍԵՐՈԲ.— Ա՛, թող տեսնեմ, յս հաց եմ ուզում: (Ծերելում և ինչպես զցեց մի կողմ բարձր):

ՀԱԿՈԲ.— Հեռու, ասում եմ:

ՍԵՐՈԲ.— Յես քաջցած եմ, լսմամ ես:

ՄԱՐԹՈՆ.— ենտեղ հաց չկա:

ՍԵՐՈԲ.— (Դուրս գալով): Վարտեղ և հացը:

ՀԱԿՈԲ.— (Նույնպես): Քեզ հաց չկա: (Նստում և սնգուկի վրա): Կարող ես գնալ ինքդ աշխատել և ուտել:

ՍԵՐՈԲ.— Իսկ... քեզ... կմ:

ՀԱԿՈԲ.— Դու ճշմարիտ ես ասում: Բայց չե՞ վոր մի ժամանակ ձեզ ամենքիդ յես եկի պահում:

ՍԵՐՈԲ.— Վնաս չունի. եսոր յես ծոմ կպահեմ: Դե կարդա:

ՀԱԿՈԲ.— Յես վոչինչ չեմ կարդալ:

ՄԱՐԹՈՆ.— Հայրիկ, խնդրում եմ. վերկաց. թող նա ուտի իմ բաժինը:

ՀԱԿՈԲ.— (Զգացված): Ձեռքիս կոշտուկները դեռ նոր են փափկել, իսկ նա ինձ մի ավելորդ բեռն ե համարում: Տերը իրեն յեղիցի, թող ուտի: (Վեր և կենում յեզ օրջվում մի կողմ):

ՍԵՐՈԲ.— Ուրեմն եստեղ և ամեն ինչ: Լավ խելք եք բանեցրել յես ու իմ աստվածը: (Մի կտոր բան զցում և բերանը յեզ ծածկում սնգուկը): Նստիր, ծերուկի: Սա ինձ բավական ե: (Մարտքային ծածուկ): Բարձիդ տակին վոչինչ չկարմարել են փողերդ:

ՄԱՐԹՈՆ.— Յես փող չունեմ, ապեր:

ՍԵՐՈԲ.— Սուսա ես ասում. փող տուր, թե չե ամեն ինչ կփշեմ, տակն ու վրա կանեմ:

ՄԱՐԹՈՆ.— Ի՞նչ ես անելու փողը:

ՍԵՐՈԲ.— Ես յերեկո Գավրուշի մոտ մեծ խաղ կա:

ՄԱՐԹՈՆ.— Թող եղ բանը. քո վարմունքով դու կսպանես սրանց:

**ՍԵՐՈԲ.**— Խրատը քեզ համար պահիր, Մարթա. շնւտ արա:

**ՄԱՐԹԱ.**— Ցես վոչինչ չունեմ, ապեր:

**ՍԵՐՈԲ.**— Ա, մի լերկարացնիլ Ասում եմ քեզ, շնւտ արա:

**ՄԱՐԹԱ.**— (Գրաբանից հանում և բաօկինակ հչկուծ, վորք ուշ զում և բացել): Կեսը քեզ, կեսը ինձ:

**ՍԵՐՈԲ.**— Դես տուր, ասում եմ:

**ՄԱՐԹԱ.**— Հալրիկ, ա...:

**ՀԱԿՈԲ.**— Ձեռք մի տալ նրան, գաղան:

**ՍԵՐՈԲ.**— Ա... բաց թող: (Խորում և յեվ ուզում և փախչել):

**ՀԱԿՈԲ.**— Զամարձակվես... լիրք անզգամ... (Թոթում և երան):

**ՍԵՐՈԲ.**— Հեռացիր: (Հրում և Հակոբն ընկնում և, ճա փախչում և մուտքի գոնով):

**ՄԱՐԹԱ.**— (Ճորում և)... Հալրիկ... հալրիկ:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Հակոբի բնակարանի բակը: Ազ կողմ տնակ իր դռնով: Մեջտեղ նեղ դռնով տախտակի մի պատ, վորի յետեվ պարտեզ: Մեջտեղ մի մեծ ծառ, վորի տակ սեղան յեվ նույն աթոռները: Զախ կողմ ծառերով տարածություն: Ազ կողմ տան մոտ զրհոր յեվ դույլ թոկով: Գարուն և:

### S E U T L 1

Մարքա յեվ Ալեքսանդր

**ՄԱՐԹԱ.**— Ցերեկի դու ուրիշների մոտ մի բան ասել ես:

**ԱԼԵՔՍ.**— Միթե կարելի լե այսպիսի բաները ուրիշներին պատմել:

**ՄԱՐԹԱ.**— Ապա ինչու լեն սկսել ինձ կասկածով մտիկ անել:

**ԱԼԵՔՍ.**— Այդ քո լերկյուտ լերեակալությունդ և, Մարթա: Դու ինձ հավատում ես:

**ՄԱՐԹԱ.**— Իհարկե, բալց մինչև լիրք պետք և եսպիս շարունակվի:

**ԱԼԵՔՍ.**— Ցես զարմանում եմ, ել ի՞նչ ես ուզում, լես քեզ եմ սիրում, դու ինձ:

**ՄԱՐԹԱ.**— Դու ասացիր մորդ կասես, ի՞նչ լեղավ, ինչու լես ուշացնում:

- ԱԼԵՔՍ.** — Ի՞նչ ե պատահել քեզ, վոր այդքան շտապում ես:  
Սոր առաջ լերես բացելը հեշտ ես իմանում:
- ՄԱՐԹԱ.** — Աղա լես ի՞նչ պիտի անեմ, լեթե իմ մայրս իմանա:  
**ԱԼԵՔՍ.** — Յեթե դու չասես, վարտեղից պիտի իմանա:
- ՄԱՐԹԱ.** — Վերջը մի որ բացվելու լե ելի. ես եղան չի մնալու:  
**ԱԼԵՔՍ.** — Ես, մի վախիլ, Մարթա, բացվելուց հետո հեշտ ե. գիտեմ ինչ. լեթե բանը միայն մայրս լիներ, վոչինչ, Բայց լես անպիտան հորիցս եմ վախենում. ախ, ինչո՞ւ մի կաթով չի խփում, վոր տեղն ու տեղը սպանի նրան:
- ՄԱՐԹԱ.** — Ինչեր ես ասում դու քո հոր մասին:
- ԱԼԵՔՍ.** — Ախ, Մարթա, այն ժամանակ լեթե մայրս չուզի լել, լես քեզ կփախցնեմ:
- ՄԱՐԹԱ.** — Դու բոլորսին փոխվել ես. դու ել առաջվանը չես:
- ԱԼԵՔՍ.** — Ե՞ս, ճանաչում եմ կանանց: Դուք բոլորդ ել ացդպես եք. մի ամիս, լերկու ամիս, և հետո տղամարդը ձեզ համար փոխված ե: Մի հարցնող լինի, ի՞նչն ե իմ մեջ փոխվել:
- ՄԱՐԹԱ.** — Բայց չե վոր առաջ դու եղան չելիր խոսում. Չե վոր դու ամեն բան վճռել ելիր իսկեւն կատարել:
- ԱԼԵՔՍ.** — Ի՞նչ անեմ, քո կարծիքով գնամ նրանց առաջ ամեն բան պարզ ասեմ, վոր քո պատճառով ի՞նձ ել տնից դուրս գցեն:
- ՄԱՐԹԱ.** — Աղա ինչո՞ւ դու ասում ելիր, քո գլխի վրա տեր չկա, և վոր դու ապրում ես միայն քո զվարճությունների համար:
- ԱԼԵՔՍ.** — Իհարկե, լեթե լես մի անխելք բան չանեմ, միշտ կապը ընմ իմ զվարճությունների համար:
- ՄԱՐԹԱ.** — Յես հասկանում եմ... իհարկե, նրանք կուզեն, վոր դու մի հարուստ աղջիկ ուզեն:
- ԱԼԵՔՍ.** — Այ, տեսնում ես. դու այդ գիտես, բայց ասում ես, շտապիր: (Մարթան լալիս ե): Ինչո՞ւ լես լաց լինում:
- ՄԱՐԹԱ.** — Հիմա լես բոլորը հասկացաւ Յես չեմ կարող... դու ինձ խարում ես, լես այդ տեսնում եմ և լես ամեն բան կասեմ իմ մորա:
- ԱԼԵՔՍ.** — Խելքդ գլուխդ հավաքիր, Մարթա:
- ՄԱՐԹԱ.** — Ինչ ուզում ե, թնդ լինի...
- ԱԼԵՔՍ.** — Մարթա, հավատացիր, դու դեռ անփորձ ես: Դու ժամանակ շատ կա, սրբիր աչքերդ, թե չե կտեսնեն: Եհ: (Գլուխում ե հայս կողմ):

## ՏԵՍԻԼ 2

Մարքա յեկ Աննա

**ԱՆՆԱ.**—(**Մասում և միջի դռնից կապոց ձեռին**), Եղ ի՞նչ եր, հը,  
ասա, եղ ի՞նչ եր, Դու լաց ես լինում:

**ՄԱՐԹԱ.**—Ո՞վ ե լաց լինում. յես հենց ենպես:

**ԱՆՆԱ.**—Նա ի՞նչ բան ուներ քեզ հետ:

**ՄԱՐԹԱ.**—Յես ի՞նչ գիտեմ:

**ԱՆՆԱ.**—Լավ ե յեթե վոչինչ չես իմացել բաւց աստված մի արաս-  
ցե մի բան պատահած լինի. Շուտ արա, ասա ինձ, Միրտս  
կճաքի, յեթե չիմանամ ինչ ե պատահել:

**ՄԱՐԹԱ.**—Նա ինձ սիրում ե:

**ԱՆՆԱ.**—Նա քեզ սիրո՞ւմ ե:

**ՄԱՐԹԱ.**—Նա եղպես ե ասում:

**ԱՆՆԱ.**—Ապա ել եղ արտասուքդ ի՞նչ ե նշանակում:

**ՄԱՐԹԱ.**—Վոչինչ:

**ԱՆՆԱ.**—Մարթա, աչքիս լավ մտիկ արա, Յես յերեխա չեմ, եստեղ  
մի բան կա, վոր դու ինձնից թագցնում ես:

**ՄԱՐԹԱ.**—Հավատացիր վոչինչ չկա. նա խոստացել եր իմ վրա  
պսակվել:

**ԱՆՆԱ.**—Խոստացել եր, Ապա ինչու նշան չի բերում. մենք վո-  
չինչ ընդդեմ չունենք:

**ՄԱՐԹԱ.**—Նա վախենում ե ծնողներից:

**ԱՆՆԱ.**—Տղամարդը վախենում ե ծնողներից. իսկ դժւ. իհարկե,  
դժւ յել ինչպես աղջիկարմատ, ասած կիխնես նրան, վոր  
դժւ յել ծնողներ ունես, վոր նրանց կհարցնես ... Յես քեզ  
եմ հարցնում, Մարթա:

**ՄԱՐԹԱ.**—Ոխ, միք տանջիլ ինձ:

**ԱՆՆԱ.**—Մարթա, աստված մի արասցե դու խաբված լինես,  
յես կըակ կըոնեմ և տեղովս-մեկ կալրվեմ:

**ՄԱՐԹԱ.**—Ի՞նչ անեմ:

**ԱՆՆԱ.**—Աչքերդ լավ բացիր, սիրելիս, Գիշեր-ցերեկ աշխատու-  
թլան ձեռքին քեզ համար ենք չարչարվում: Աչքս մենակ  
քեզ ե տեսնում. այս տան բախտը դժւ պետք ե բացես. դու  
հո ամենքիս տեսնում ես. յեթե քեզ ել մի բան պատահի,  
ել են ժամանակ ավելի լավ ե մի քար կապեմ ես չորացած  
կըծքիս ու ջուրը զցեմ ինձ խեղդեմ:

**ՄԱՐԹԱ.**—Ի՞նչո՞ւ յես ինձ վախեցնում։  
ԱՆՆԱ. — Յես ուզում եմ քո աչքդ բացեմ, իսկ դու ասում ես յես  
քեզ վախեցնո՞ւմ եմ։  
**ՄԱՐԹԱ.**— Ի՞նչ մեղք, յեթե նա յերգվում է, վոր ինձ սի-  
րում եւ։  
ԱՆՆԱ. — Իսկ դո՞ւ։  
**ՄԱՐԹԱ.**— Ի՞նչո՞ւ յես բարկանում։  
ԱՆՆԱ. — Ուրեմն դու հավատացմէլ ես նրա սուտ յերդումներին։  
**ՄԱՐԹԱ.**— Ի՞նչի՞ն ուզում ինձնից։  
ԱՆՆԱ. — Բորոտ ընկներ մարմնիդ մեջ, ալ թէ ինչ եմ ուզում։

### S E U H L 3

Մարքա, Աննա յեվ Հակոբ

**ՀԱԿՈԲ.**— (**Սոնում եազ դռնից**): Ա՛, գուք ևստի՞դ եք, ինչ ասածո  
որհնած բան ե գարունը։ Յես ինձ ենպես եմ զգում, կարծես  
թէ նորից 30 տարեկան եմ դառեր։ Դեռ ամառը ավելի լավ  
ե։ Փորձեմ մեկ ջուր քաշեմ։ (**Զուր ե բացում**)։  
ԱՆՆԱ. — (**Ցած**): Թող կրակ մազդի իմ սպիտակած զլիսին։ Թող  
պատուի գետինը ե կուլ տա մեզ ամենքիս։ Սրա համար եր  
նա եղքան քսքսվում, սրա համար եր նա բարերար ձեա-  
նում։ Յես նրան ցուց կտամ։  
**ՀԱԿՈԲ.**— (**Քաւեց**): Ահա, տեսմք Զե, հավատացէք, ես ամառը  
յես անպատճառ մի գործի պետք ե մտնեմ։ Մինչև յես մի  
գործի չմտնեմ, Ներսեսս չի կարող հանգստանալ։ Բայց դուք  
ինչմւ յեք փոխված։ Մարթա, Աննա, ի՞նչ ե պատահել, ասացեք  
ինձ։ (**Փողոցի դուռը ծեծում են**)։ Եղ ի՞նչ ե, փողոցի դուռը  
հո բաց ե։ Գնամ տեսնեմ ո՞վ ե ծեծողը։ (**Գնաց միշի դռնով**)։

### S E U H L 4

Մարքա յեվ Աննա

ԱՆՆԱ. — Ի՞նչ պատասխան տամ ես խեղճին, դեռ ի՞նչ պետք ե պա-  
տասխանեմ են միուսներին։ Լավ սեացը եր որներս։  
**ՄԱՐԹԱ.**— Ո՛, յի սպանեք ինձ։  
ԱՆՆԱ. — Կորիր աչքիցս, անզգամ։ Ել ալսուհետեւ չհամարձակվես  
վոտքդ տանից դուրս դնել։ Տեսնում եմ, — ամոթ պատկա-  
ռանքը վոտքի տակ ես տվել, ել քեզ տանը պահել չի կա-

բելի. առաջի պատահած կեղտուտ մշակ ել լինի, պետք ե  
տալ առնի կորցնի քեզ եստեղից: Սև լիներ են որը, վոր  
քեզ ձնեցի:

ՄԱՐԹԱ.—Մայրիկ, ինչե՞ր ես ասում:  
ԱՆՆԱ.—Զայնդ, անզգամ:

## ՏԵՍԻԼ 5

Մարքա, Աննա, Հակոբ յեվ Ներսես

ՀԱԿՈԲ.—(Ռոգելով Ներսեսին ներս և բերում միջի գոնով):  
Աննա, Ներսեսն ե:

ՆԵՐՍԵՍ.—Մի վախենալ, մայրիկ: Դուան մոտ մի քիչ ինձ վաս  
զգացի, սրա համար ել գուռը ծեծեցի: Գարունը լավ ե,  
յերբ մարդ ծառերի տակ ե ... իսկ ենտեղ դուք մեկ հնաբ  
լիներ աղատվել ենտեղից: Ենտեղ կուրծքս բռնվում ե, հա-  
զը սպանում ե ինձ: Կարծես տաքությունս սաստկացել ե.  
մեկ տես, մայրիկ:

ԱՆՆԱ.—(Ռոգելով ճեռքը): Կրակի մեջ ալրվում ե յերեխաս:

ՀԱԿՈԲ.—Տունս քանդվում ե. յես կզնամ Մինասին կկանչեմ:  
ԱՆՆԱ.—Ռուր ես գնում:

ՀԱԿՈԲ.—Յես իսկույն: Յերեք ըոպե չի քաշել (Գնաց մեջին  
գոնով):

## ՏԵՍԻԼ 6

Մարքա, Աննա յեվ Ներսես

ՆԵՐՍԵՍ.—Մի լաց լինի, մայրիկ. յես դեռ ենքան ել վատ չեմ:  
ԱՆՆԱ.—(Մարքային): Գնա անկողին պատրաստիր: Կորիք:

ՆԵՐՍԵՍ.—Ռչ. սպասիր, հարկավոր չի, թող նա ինձ մոտ նստի:  
Նրա քաղցր դեմքին մտիկ անելուս իմ հոգիս հանգստանում  
ե: Յես ցերեկով քիչ եմ տեսնում նրա յերեսը, իսկ գիշերը  
շուտ ենք պառկում քնելու: Նստիր ինձ մոտ, Մարթա (Մար-  
քան նաևց): Բայց դու գունատ ես. թե իմ աշքերս են  
խառնվել: Ի՞նչ ե պատահել սրան: Զլինի ինձ համար եք  
վախեցել: Վոչինչ, հոգս մի անեք, թուքս դեռ չի կարմրել  
սա կանցնի: Շատ անզամ ե պատահում, կարծում ես հի-  
վանդ ես, բայց դուրս ե գալիս, վոր բոլորովին առողջ ես:

Ո՞խ, ինչպես ներսիս կը խոսեցնել և տալիս ինձ: (Մի.  
ծաղում ե, վոր փոթզում ե չոր հագի):

ԱՆՆԱ.—Թար կարգելի լես, եղ յավերը չահսնելի, վորդի:

ՄԱՐԹԱ.—Քիչ խոսիր, ապեր, տեսնում ես, վոր վնասում ե:

ՆԵՐՍԵՍ.—Թայց ինչպես լուս: Յես սիրում եմ խոսել, հանաք-  
ներ անել... Յեթե կարողություն ունենալինք, կը աշլելի  
մի գլուղ տեղ, կհանգստանալի և ... կարելի լի լավանալիք  
ել են, ավելի լավ եր մի հովիվ լինելիք, լերկրագործ, կա-  
ռապան ... թնչ եմ տառում, մարդիկ: Դեռ, փառք աստուծո,  
լես 27 տարեկան եմ, բայց մեր գործարանում լերեխանե-  
րից շատերը 20 տարուց ավելի չեն ապրում, մեղճերը կար-  
միր-կարմիր թշերով գալիս են, իսկ հետո, մնաք բարե  
խեղն մայրեր: Մարթա, մի սառը ջնուր: (Մարքան գնաց աշ  
դոնից բաժակ բերելու): Մարին, ինչնու լի նա փոխված:  
Գոնեն նրան լավ պահեցիք. նա մի գեղեցիկ վարդ ե ես թա-  
ռամածներիս մեջ: Ի՞նչ ենք մենք, մարդող ճրագներ:

ՄԱՐԹԱ.—(Դույլից շուրջ առավ բերավ): Զի՞ վնասիլ, ապեր.

ՆԵՐՍԵՍ.—Ներսումս կը ակ կա, պետք ե հանգսնել եղ կը կը:  
Վորտեղ և մնացել Սերոբը: Ինչ լավ կլիներ մի որ ես մեր  
ծառի տակ մի ուրախություն անելինք: Յերեկի շուտով կգա  
և թութի ժամանակը: Զի՞ մարդիկ, ինչնու չեք խոսում:

ԱՆՆԱ.—Իհարկե, մի քանի որից հետո թութն ել կհասնի:

ՆԵՐՍԵՍ.—(Խմենց): Հիանալի լի. առայժմ մարեց կը կը:

## S E U H L 7

Մարքա, Աննա, Ներսես, Հակոբ լիլ Մինաս

ՀԱԿՈԲ.—(Սենում են միջի գոնից): Համեցնք: Աննա, վարպետ  
Մինասն ե. իմ լավ բարեկամը: Մոտեցիր, Մինաս. մի ա-  
մաչի:

ՄԻՆԱՍ.—Բարի որ ձեզ: (Սուանձնապես օնդում ե Մարքային).  
Ճեռ ե առլիս ամենին, վերջում՝ Ներսեսին): Քիչ հետ  
հո լավ ծանոթ ենք, Ներսես ջան: Ձեռքդ տաք ե լերեւում,  
ինչպես ես զգում քեզ:

ՆԵՐՍԵՍ.—Տաք՝ ենպես, վոր վերցմակ հարկավոր չե:

ՄԻՆԱՍ.—Լավ ես, մի վախիլ:

ՄԱՐԹԱ.—Սառը ջուրը մնաս չի՞ նրան:

ՄԻՆԱՍ.—Չե, վարպետի աղջիկ. քանի վոր քրտնած չի, մնաս

չունի: Նրա ճարը հենց ես քաղցր ողն ե, վոր կա: Ի՞նչ  
անես, թամբաքու հնարողի հերն անիծվի: Են զիկումից  
դժու յել ես քաշում, ներսես:

ՆԵՐՍԵՍ.—Չե:

ՄԻՒԱՍ.—Վատն ել հենց եղ ե, լե: Քաշողի վրա ենքան ներգոր-  
ծություն չունի, ինչքան չքաշողի վրա: Ենպես չե, ներսես  
ջան:

ՆԵՐՍԵՍ.—Լավ ես նկատել:

ՄԻՒԱՍ.—Նկատելն ել խնսք եւ, Յես ինձ վերա լեմ փորձել: Զըխ-  
կումը մտտիս վոր քաշում են, կամ գլուխս ե պտտվում,  
կամ ներսս շուռ գալիս:

ՀԱԿՈԲ.—Աննա, նա ծխողներից չե:

ԱՆՆԱ.—Յերկի ժամանակ չի ունենում:

ՄԻՒԱՍ.—Ժամանակ չունենալն ել խնսք ե: Յերես խուզելու մա-  
շինը մեր տունն ե քանդել: Ենպես որ ե լինում, առավո-  
տից մինչ յերեկո գործ չի լինում: Պարապ չմնալու համար  
սկսում ես ածելիդ սրել, վոր իսկի չի յել մտածել բթանա-  
լու: Մին-մին կանքետ ուտողների փթած ատամ քաշելն ել  
վոր չինի, որերով պետք ե ճանճ քշես:

ՄԱՐԹՈՆ.—(Սնգգուօռությամբ փոքրացնում ե ու փախչում աջ,  
ուսկից հետո բերում ե ինքնայեռը յեվ գնում ե սեղանի  
վրա, հետո նորից յես զնում):

ՄԻՒԱՍ.—(Մածուկ Հակոբին, Մարգարի հասցեյին): Դուք եկավ:  
ՀԱԿՈԲ.—(Նույնպես): ՉԵ վոր յերեխս յե:

ՄԻՒԱՍ.—Չե, ներսես, վոր դոխտուրին կուզես հարցրո՞ւ. գու-  
պետք ե դուրս գաս եղ անիծված թամբաքվի ֆարբիկից:

ՆԵՐՍԵՍ.—Յես ել հմ նույնը մտածում, վարպետ Մինաս, բայց  
վորտեղից հաց ճարենք ես պարոնների համար:

ՀԱԿՈԲ.—Չե, ներսես, որերը մի քիչ ել տաքացան թե չե, յես  
անպատճառ մի գործի կմտնեմ. թիղ թեկուզ փողոցներ-  
սրբել տան ինձ: Յեղած չեղածներս կծախեմ, պարտքի տակ  
կմտնեմ, բայց քեզ եղ որի չեմ թողնիլ: (Մինասին ծա-  
ծուկ): Դու հարցրո՞ւ, մի քաշվիլ, յերիտասարդ ե, մվ գիտե-  
կարելի յե նա մեղնից ծածկում ե իրա իսկական ցավը:

ՄԻՒԱՍ.—(Նույնպես): Խելքս բան չի կտրում, ներսեսն ենպես  
տղա չի. բայց կարելի յե փորձել: Ներսես ջան, յես քեզ  
հետ մի յերկու ծածուկ խոսք ունեմ:

ՆԵՐՍԵՍ.—Ի՞նձ հետ համեցնք: (Գնում են միջի գոնով):

## S E U H L 8.

Աննա յեվ Հակոբ

**ՀԱԿՈԲ.**—Աննա, դու ինձ վախեցնում ես, եղ թնչ աչք ունք և  
քեզանում:

**ԱՆՆԱ.**—Վոչինչ:

**ՀԱԿՈԲ.**—Զե, մի ասիլ. տեսնում եմ, զոր մի ծակուկ միտք ու-  
տում և ներսգ. Ասմ ինձ:

**ԱՆՆԱ.**—Դու ասում ես եղ Մինասը լավ տղա յե:

**ՀԱԿՈԲ.**—Հա, Աննա, մի նեղանալի Յես ուզում եմ, զոր  
առաջինը նա մի լավ զննի մեր ներսեսի հիվանդությունը:  
յերկրորդ, նա ուզում եր փոքր լավ ծանոթանալ Մարթա-  
լիս հետ: Նա իրա վարպետությունով ենպես որ և լինում,  
3 ոռորի յե աշխատում, հանաք չիմանաս. Բացի եղ մեկը,  
գյուղում նրանք հայտնի առուն են, չեմ իմանում քանի հատ  
հենց գութան ունեն, քանի հատ լեղը և մեղրաճանճ: Տա-  
րեկան քանի բեռն հենց գինի յին ուղարկում նիժնի:

**ԱՆՆԱ.**—Յեթե դու լավ ես ճանաչում, ել յիս թնչ ասեմ:

**ՀԱԿՈԲ.**—Աննա, յերեի քեզ ել և զուր եկեր Արի յերեխին տանք  
նրան: Յես քեզ հավատացնում եմ, զոր նա իմ աչքում  
հաղար անգամ բարձր և մեր ես քաղաքի խմող, խաղացող  
և վատ հիվանդությունների տեր տղերքից:

**ԱՆՆԱ.**—Ի՞նչ ասեմ, յես ասացի մի կարգին մարդ լիներ, զոր  
նա յել մի լավ որ տեսներ:

**ՀԱԿՈԲ.**—Բայց դու ինձանից մի քան ծածկում ես, ասմ ... թնչ  
և պատահել:

**ԱՆՆԱ.**—Բերանս խոսք չի գալիս, մմրդ:

## S E U H L 9

Աննա, Հակոբ, Ներսես, Մարքա յեվ Ալեքսանդր

**ՆԵՐՍԵՍ.**—(Միջազելով մտնում և միջի դռնով): Շատ հանաք-  
չի յե վարպետ Մինասը, հալըիկ! (Մտնում և Մարքան ա-  
շից յեվ բեյի մոտ նստում):

**ՀԱԿՈԲ.**—Ո՛, նա շատ լավ տղա յե, ի՞նչ ե, ո՞ւր գնաց նա, դու  
նրան չալի չկանչեցի՞ր:

**ՆԵՐՆԵՍ.**—Նա իմ ասելուս չսպասեց ել: Նա ասաց՝ ես ըռպելիս

կգամ և դոխտորական վարձիս տեղ մի լավ չալ կխմեմ  
ձեզ մոտ:

ՀԱԿՈԲ.—Եղպես ե, նա չունեորներից փող չի վերցնում, միշտ  
ասում ե, «Թասս չունի, մնա, յերբ կհարստանաք, կվճարեք»:

ԱԼԵՔՍ.—(Սենում և ձախ կողմից): Վոսկի հարեաններ, հյուր-  
չըք ընդունիլ:

ՀԱԿՈԲ.—Հյուրն աստծունն ե, ինչժմ չենք ընդունիլ:

ԱԼԵՔՍ.—(Սեռ բռնելով Հակոբի ենթ): Զե, դեռ պինդ ես, ծե-  
րուկ:

ՀԱԿՈԲ.—Լավ եմ: Ամառը մտադիր եմ մի գործի մտնել:

ԱԼԵՔՍ.—Ակո՞: այդ լավ կլինի:

ՀԱԿՈԲ.—Ի՞նչ պետք ե անես, մեր ճակատին եղպես ե գրված.  
քանի ուրիշ կա, պետք ե գործես:

ԱԼԵՔՍ.—Աստված պահի, դու դեռ աշխատող ձեռքեր ունես:

ՀԱԿՈԲ.—Բայց ծալրը ծալրին դժվար ենք հասցնում: Ուրիշ բան  
և ձեր գործը:

ԱԼԵՔՍ.—Ես, այդ ճշմարիտ կլիներ, յեթե սանձս ծնողներիս ձե-  
ռին չկլիներ:

ՀԱԿՈԲ.—Ցես ձեզ կասեմ, լավ ե, յերբ վորդին ծնողի խոսքեց  
չի դուրս գալիս:

ԱԼԵՔՍ.—Դե այն ժամանակ թռղ լես կուլը ծնվելի, խռով ծնվե-  
լի, քանի վոր լես իրավունք չունեմ ասելու, վոր սա ավե-  
լի գեղեցիկ, և քան թե մտուսը, վոր սա ավելի լե ինձ դուր-  
գալիս, քան ձեր ասածը:

ՀԱԿՈԲ.—Զե, պարոն: Վորդին յերբեք հոր ցուլց տված ճանա-  
պարհից չպետք ե դուրս գա: Ի՞նչ և յերիտասարդը: յեթե  
նրա արյունի մեջ մի քիչ բնական ազնվություն կա, եղ ու-  
րիշ բան: բայց յեթե չկա, ուղղակի պետք ե զլուխը կա-  
պած պահես: վորովհետեւ ի՞նչ զանազանություն՝ կա նրա՝  
կամ թե մի շան մեջ: իսկ ի՞նչ ե շունը: բաց թռղ փո-  
ղոց և կտեսնես, վոր իսկույն նա իրա շնությունն արավ:

ԱԼԵՔՍ.—Բայց յեթե մի հարուստի վորդի, —լես, իհարկե, որինա-  
կի համար եմ ասում, —յեթե նա սիրել ե մի աղքատի աղ-  
ջիկ, իսկ հալը նրան ասում ե, «կորիր, շուն, չհամարձակ-  
վես. և յեթե դու իմ կամքին հակառակ կդնաս, լես քեզ  
կզրկեմ հալրական ժառանգությունից և տանից դուրս կը-  
վոնդեմ»:

ՀԱԿՈԲ.—Ցեթե լես իմանալի, թե թվ ե են հարուստը, լես նրա

ճակատին կասելիի, վոր ինքը աստծո վորդին վոչ վորից չեր  
քաշվում և միշտ աղքատների հետ եր նստում վեր կենում:

ԱԼԵՔՍ.—Ռւրեմին:

ՀԱԿՈԲ.—Ռւրեմին են, վոր խոսքը աղքատությունի մասին չպետք  
ե լինի, այլ անարատ անունի մասին: Դուք ասացիք որի-  
նակի համար, յնս ել կասեմ: Իմացած յեղեք, պարոն, վոր  
վոչ մեկ մարդից չեմ ամաչիլ, վոր յես աղքատ եմ. բայց  
թող վաւ լինի մեր գլխին են որը, յերբ վոր իմ ընտանի-  
քից մեկնումենկը փողի համար իրա պատիվը կծախի:

ԱԼԵՔՍ.—Կարծեմ գուք մի վորդի ունեք:

ՀԱԿՈԲ.—Յերեսնվա մի տաք, վոր իմ պատառիս մեջ ել կեղա և  
դուրս յեկել: Բայց նրան փչացնողը յեղել ե փողոցը, և վոչ  
թե իմ տունը, իմ տանս մեջ, ահա, դուք անսնում եք, ա-  
մենքը ձեր աշքի առաջ են. սրանք բացի աստծո խոսքը,  
ուրիշ բան չեն լսել:

ԱՆՆԱ.—(Ալեքսանդրին ծածուկ): Ցես ձեզ հետ ծածուկ խոսք  
ունեմ:

ԱԼԵՔՍ.—Ի՞նձ հետ, խնդրեմ:

ՄԱՐԹԱ.—(Մածուկ): Մայրիկ, խնայիր ինձ ի սեր ...

ԱՆՆԱ.—(Նուինպես): Զայնդ, անզգամ, (Գնացին ձախ կողմ):

ՆԵՐՄԱՆՈՒՄ.—(Հորը ծածուկ): Եստեղ մի բան կա ...

ՀԱԿՈԲ.—Մեկ ես կողմ քաշվենք: (Գնացին աշ կողմ):

ՄԱՐԹԱ.—(Պահան). Ահ. բավական ե. պետք ե վերջ դնել եղ  
խալտառակության, պետք ե ազատել ինձ արդ կրակից ...  
ել ամեն ինչ կորավ ինձ համար ... թող խավարվի իմ կյան-  
քիս արևը ... (Զրիորի մոս) ... Ներիր ինձ, աստված ... յես  
իմ արածս չեմ հասկացել ... Միայն քեզ ե հալտնի իմ ան-  
մեղությունը: Մնաք բարով իմ կյանք և յերիտասարդու-  
թյուն, մնաք բարով իմ յերեխալական յերազներ: (Նայեց  
շրիորին): Ահ ... յես արդեն այնտեղ եմ ... Նա ինձ քաշում  
ե ... նա ինձ ուղում ե կյանել ... փրկեցնք ինձ ... յես չեմ  
կարող ... չեմ կարող ... Ցես չեմ կամենում մեռնել ... Ցես  
կամենում եմ աղբել ...:

## ՏԵՍԻԼ 10

### Մարքա յել Մինաս

ՄԻՆԱՍ.—(Միշտ զանով, բաօկինակի մեջ մեղր ու բազարց  
ձեռին): Վարպետ Հակոբի աղջիկ:

**ՄԱՐԹԱ.**—(**Վորպես փրկության հաճղիպած**): Ա՛ ...

**ՄԻՆԱՍ.**—Ի՞նչ ե. վախեցմբ ինձնից: Մի վախիլ. իս քեզ չեմ ու-  
տիր: Զես նեղանալ, յեթե քեզ մեղը ու բաղարջ համեցեք  
անեմ:

**ՄԱՐԹԱ.**—Դրեք սեղանի վրա:

**ՄԻՆԱՍ.**—(**Թաւոկինակը ատամներով բանալով, խոսելով**): Հա-  
րուստը ավելորդից, իսկ մենք ասսու տվածից: Խնդրեմ նե-  
րողություն:

**ՄԱՐԹԱ.**—Շնորհակալ եմ:

**ՄԻՆԱՍ.**—Յես քեզ հետ թեև մոտ չեմ, բայց հալրդ ենքան ե  
պատմել, վոր հենց իմանաս շատ հին ծանոթներ ենք: Ղոր-  
թը ասա, իմ մասին նա քեզ բան-ման չի ասել:

**ՄԱՐԹԱ.**—Ասել ե:

**ՄԻՆԱՍ.**—Հա, ի՞նչ ե ասել:

**ՄԱՐԹԱ.**—Վոր գուք շատ ուժեղ եք. վոր կարողանում եք գոմեշ-  
ների հետ կուշտի կպչել և վոր շատ բարի սիրտ ունեք:

**ՄԻՆԱՍ.**—Հա, Մորս կաթը վկա, շատ լավ ե ասել: Սրանք ինձ-  
նում կան: Բայց յեթե խելքս կը ունեմ չի, այլ զիշիս մեջ,  
կարծեմ ինձնից քիչ նեղացած լինես, վորովհետեւ քիչ առաջ  
ձեռքդ պինդ հուպ տվի:

**ՄԱՐԹԱ.**—Այո. սուտ չեք ասում. հիմա յել մատերս դեռ ցավում  
են:

**ՄԻՆԱՍ.**—Ներողության. եղանակ արի, վոր ինձ չմոռանաս: Ճշմա-  
րտ ե, քեզ գուր չի գալ կոշտությունս, բայց սիրտս ուզիղ  
ե: Իսկ ուղիղ սիրտը քաղցր լեզվի հարկավորություն չունի:  
Սմւտ եմ ասում:

**ՄԱՐԹԱ.**—Իհարկե չե:

**ՄԻՆԱՍ.**—Զասես թե անամոթի մեկն եմ, վոր մտել եմ ենտեղ,  
վորտեղ իմ չափս չեմ հասկանում: Իհարկե, յերեխան ել ե  
իմանում, վոր վոսկին ավելի լավ ե, քան թե յերկաթը, և  
վոր սոխից շաքարը քաղցր ե: Քո տեղ լինելի, իս ել կա-  
սելի: —Ո՞վ ե սա. ունեցած-չունեցածը մին մկրատ ե, մին  
ածիլի: Սմւտ եմ ասում:

**ՄԱՐԹԱ.**—Հայրս ասում ե, գուք յերեք սուտ չեք ասում:

**ՄԻՆԱՍ.**— Հա. եղ մեկը զորթ ե: Ծերուկն ամեն տեղ ինձ՝ գո-  
վում ե: Բայց գե սրանից իմ փորն ի՞նչ ե ընկնում: Վոչինչ:  
ինձ պետք ե աղջիկը հավանի, և վոչ թե հալրը:

**ՄԱՐԹԱ.**—Հո յես ձեզ վատ մարդ չեմ ասում:

**ՄԻՒԱՍ.**—Ե՛, մի ասիլ! Միթե չԲմ նկատում: Այ, դու ինձ չաշ  
համեցեք անելու տեղ, քիչ և մնում բերած ամանս ել զլիսիս  
կոտրես:

**ՄԱՐԹԱ.**—Ախ. աստված մի արասցե: Ի՞նչպես կհամարձակվեմ:

**ՄԻՒԱՍ.**—Դե յեթե եղաղես ե, դռւ լինես են սուրբ մեռոնը, արք  
ճշմարիտը ասմ. ինչի՞ յե սիրտդ եղաղես կոտրված յերեռում:

**ՄԱՐԹԱ.**—Ախ. մի հարցնեք: Այս ըոսելիս գլխիս մին ենպիսի  
բան յեկավ, վոր քիչ մնաց խելքս կորցնելի. հոգիս դժոխքի  
բաժին անելի: Ներեք, վոր վոչ ասածո եմ հասկանում, վոչ  
արածու:

**ՄԻՒԱՍ.**—Չե. մի ասիլ! Յես իմանում եմ ... բայց ... յեթե Սե-  
րոբի համար ե, հոգս մի անիլ. մին կերպ ճանապարհի կրե-  
րենք: Յեթե հորդ ու մորդ համար ե, դե ծեր մարդկանց հա-  
մար ի՞նչ զլուխ կոտրենք: Յեթե ներսեսի համար ե, միամիտ  
յեղիք. յես նրան ել կլավացնեմ: Բայց յես վախենում եմ  
ինձ համար լինի:

**ՄԱՐԹԱ.**—Չեզ համար ի՞նչ պետք ե լինի:

**ՄԻՒԱՍ.**—Ի՞նչ գիտեմ: Կարելի յե դու յել մտքումդ փոխված լի-  
նես ու ասես.—խեղճ տղա, յեկել ե առաջիս սալդաթի նման  
կանգնել, մոմի նման հալվում ե, ամոթից ճաքնաքին ե  
գալիս, բայց մի բերան չի կարողանում ասել, այ աղջիկ,  
յես մին խեղճ տղա քեզ սիրելուց մեռա, մեռա, մեռա:

**ՄԱՐԹԱ.**—(Ֆեղվելով): Ա՛հ ...

**ՄԻՒԱՍ.**—Ի՞նչ ե, դուք չեկմվ քեզ իմ պարզիպարզո խոստովա-  
նությունը:

**ՄԱՐԹԱ.**—Ախ ... չգիտեմ ի՞նչ պատասխանեմ ... թողեք մի քիչ  
լավ մտածեմ:

**ՄԻՒԱՍ.**—Մտածիր, քուկրս. մտածիր: Հավատա ինձ, յես ել շատ  
եմ մտածել ...

**ՄԱՐԹԱ.**—Ի՞նչ ...

**ՄԻՒԱՍ.**—Վոչինչ, վարպետի աղջիկ: Ալդ մասին յես կասեմ մի-  
միայն ներսեսին: (Երջվեց):

**ՄԱՐԹԱ.**—(Կողմ): Ախ, սա ի՞նչ տանջանք ե: Ի՞նչպես բանամ  
յերեսս ... Ախ, յեթե յես արժանի լինիլի նրան ...

(Խորհրդավոր լուություն):

Մարքա, Մինաս, Հակոբ յեկ Ներսոս, մետ Աննա յեկ Ալեքսանդր

ՀԱԿՈԲ.—(Թ.Չ կողմից): Ա՛, վարպետ Մինաս, դու արդեն լեկե՞լ ես. եղ լավ լեղավ: Բո ասածիդ պես լեղավ, Ներսոս, կնստենք մեր մեծ ծառի տակ և ուրախ-ուրախ թել կխմենք:

ՆԵՐՍԵՍ. —Համեցնք, վարպետ եղ ինչ ե, մեղք ու բաղարջ: Ինձ վնաս չե՞ վարպետ:

ՄԻՆԱՍ. —Վոչ թե քեզ, քը նո՞ն ել վնաս չե:

ՆԵՐՍԵՍ. —Ի՞նչ ե ասում, Մարթա:

ՀԱԿՈԲ.—Մի խանգարիլ նրանց: (Ալեքսանդրին, վոր Ա.Յ.Յայի հետ մասվ ձախից): Ա՛, համեցնք, Աննա, ի՞նչ էլիք խոսում պարոնի հետ:

ԱՆՆԱ. —Վոչինչ, դու թելդ խմի՞ր:

ՀԱԿՈԲ.—(Ալեքսանդրին): ԶԵ՞ք կամենում մի բաժակ թել: Համեցնք: Աստծո տվածից անուշ արնք: Բայց վորովհետեւ լավ տանտիրոջ պարտավորությունն ե սեղանի պատրաստությունը քաղցը խոսքերով լրացնի, իս ել ձեզ համար կխոսեմ բանին աստծո խոսքը:

ՄԻՆԱՍ. —Եղ մեկը լավ ե. իս ուրախությունով ականջ կդնեմ:

ՀԱԿՈԲ.—Սրա համար ել լիս քեզ հավանում եմ, Մինաս: Իսկ դուք, պարոն, կարելի լե ձեզ ձանձրալի թվա. գիտե՞ք, հարուստները մի քիչ դեպի աստծո խոսքը սառն են լինում: ՆԵՐՍԵՍ. —Շատ հասկանալի լիս, հայրիկ, ի՞նչ խնդրեն, լիրբ ամեն բան ունեն:

ՀԱԿՈԲ.—Իսկ արքայությունը: Մի՞թե հանդերձալ կյանք չկա:

ՄԻՆԱՍ. —Սրա համար ել ասված ե, ուղան ասեղի ծակով անց կկենա, իսկ հարուստն արքայության դռնով՝ վոչ:

ԱՆՆԱ. —Ավելի լավ ե ուրիշ բան խոսեք:

ՆԵՐՍԵՍ. —Մի նեղանալ, թող խոսի հայրիկը:

ՀԱԿՈԲ.—(Գրի մեջ ցուց օտարով): Տեսէք եստեղ ինչ լավ ե ասված: Յերբ կկանգնես նրա առաջ, նա քեզ չի ասի, կուշտ ես լեղել, թե քաղցած: Նա քեզ կասի, ուր ե քո գործը, ուր ե քո գործը: Յես ասում եմ քեզ, մարդ, կդողաս նրա առաջ, կդողաս: Յերանի նրան, վոր կինամե բանտում լինողին, վոր ջուր կտա ծարավին:

ԱՆՆԱ. —Կերիք ե. քիչ տաքացիր, կինասի քեզ:

**ՀԱԿՈԲ.** — Նա կպատժի չարին, իսկ բարիին կասիր. յնկ ինձ մոտ, ով  
ընտրւած նա, վարի ձեռքին և արդարության կշիռը: ՄՌ,  
որհնեցնք տերի անունը հավիտենից հավիտյան:

**ԱՆՆԱ.** — Վերջացրու մարդ, բավական եւ:

**ՀԱԿՈԲ.** — Զարհուրելի յե, քարոզիչը բերան և բացում թե չե, մեկ  
ել տեսնես՝ մենակ և մնացել. Աննա, սա լավ բան չե, գու  
վոչ աղոթք ես սիրում, վոչ ասածո խոսքը:

**ՆԵՐՍԵՍ.** — Մայրիկը գործի ձեռքից յնըրը և աղատ շունչ քաշում,  
վոր աղոթքի մասին մտածի:

**ՀԱԿՈԲ.** — Դե յնս մեղա ասածո, գնւք խոսեցնք:

## ՏԵՍԻԼ 12

Աննա, Մարքա, Մինոս, Հակոբ, Ալեքսանդր, Ներսես յեվ Սերոք

**ՍԵՐՈԲ.** — (Ստենում և միջի գոնից): Եստեղ մեկը ավելորդ եւ:

**ՀԱԿՈԲ.** — Եստեղ վոչ վոք ավելորդ չկա. Եստեղ ավելորդը միայն  
դու յես: Կորիք, հեռացիր եստեղից:

**ՍԵՐՈԲ.** — Եստեղ մեկն ավելորդ եւ, ասում եմ:

**ՄԻՆԱՍ.** — Կարելի յե յնս եմ ավելորդը, յես իսկուլն (ուզում և  
գերկենալ):

**ՀԱԿՈԲ.** — Խնդրում եմ, նստիր: Նա ի՞նչ իրավուք ունի: Դու ի՞նչ  
իրավունք ունես:

**ՍԵՐՈԲ.** — Իմ իրավունքիս վկայականը եստեղ եւ: (Ցույց և օալիս  
պիշտակի տակ):

**ՀԱԿՈԲ.** — Սուր առնողը սրով կսպանվի:

**ՆԵՐՍԵՍ.** — Հանգստացիր, հայրիկ. Թռղ նա նստի մեղ հետ. մոռա-  
ցմբ քարոզզ:

**ՀԱԿՈԲ.** — Տերը ձեզ յեղիցի. նստում եւ, թռղ նստի:

**ՆԵՐՍԵՍ.** — Մարթա, Սերոբի համար չալ ածա:

**ՍԵՐՈԲ.** — Նեղություն միք քաշիլ: Դուք կարծում եք իմ կոկոր-  
դով եսոր չալ կգնա: Դես, ել ով ինչ ունի ասելու, թռղ  
վերջացնի:

**ԱԼԵՔՍ.** — Ինձ ներեցնք: (Ուզում և զնալ):

**ՍԵՐՈԲ.** — Սպասեցնք, պտրոն, յես ձեզ հետ խոսք ունեմ:

**ԱԼԵՔՍ.** — Հետո կտեսնվենք:

**ՍԵՐՈԲ.** — Զե, յես «հետո» սիրողներից չեմ: Պարոն դոխտուր,  
չվերջացրի՞ր եղ դեղին ջուրը:

ՄԻԱՅՈՒ. — ԸՆԴ. վերջացրի:

**ՍԵՐՈԲ.**—Ել խոսք չունես ասելու:

ՄԻԱՅԱ. — Ետա ել ունեմ, քանի վոր դանակը կոկորդիս ես դրեւ  
հետո:

**ԱԵՐՈԲ. — ԴԵԿ.**, ցուց տուր քաղաքավարությունդ:

**ՄԻՆԱՍ. —** Ես իմ քաղաքավարությունս ցուց կտամ, բայց քունը մին քաղաքավարություն չեր։ (Գնաց միջին զոհով)։

STUDY 13

Ա.Ա.Ա. Հակոբ, Ներւս, Ալեքսանդր, Մարթա յեկ Սերգ

ՀԱԿՈԲ. — Քեզ ովք իրավունք տվավ իմ հյուրիս փախցնել:

ՍԵՐՈԲ. — Ինձ իրավունք ավողը մեր ընտանիքի պատիվն է, ծերուակ:

## ՀԱԿՈԲ. — Ի՞՞նչ:

**ՍԵՐՈԲ. —Ալո՛.** յես անտոռակ եմ, յես շարլատան եմ, բայց տես-  
նում ես ես մուշտին։ Թիչ ատամներ չի թափել նա, յերբ  
նրանց յետեռում մի չար լեզու համարձակվել ե հիշոցներով  
կայել ձեղանից մեջնուումնեկի անունին։

ՆԵՐՍԵՐՈՒԹՅՈՒՆ. — Եստեղ մի վատ բան ե կատարվել, վորը լեռ չեմ ի-  
մանում:

ՍԵՐՈԲ. — Լսիր, ապեր, կատարվել ե, թե չի կատարվել, ես  
տեղ պետք ե պարզվի, վորովհետև ես որ դատաստանի  
որ եւ Քանի վոր քո գլուխդ գործով ե խառն յեղել, կամ  
թե կարելի յե հիվանդությանդ խնայել են, քեզ բան չեն  
տաել, քանի վոր ես ծերուկը բանին աստծո խոսքի վրա յե  
ցնորդվել, քանի վոր ես խեղճ պառավը մի կտոր հա-  
ցի համար սրա-նրա դռներն ընկած տան պահպանությունը  
հանձնել ե սրան, ես անլեզու գառնին, մեր բակի մեջ, տ-  
սում են, գող ե դարան մտել ... և գողացել ե մեր տան  
պատիվու:

ՀԱԿՈՒ. — Ո՞վ ե հնարի, եղ սուտը... սո՛ւտ եւ

ՍԵՐՈԲ. — Յեզ եղ գողը ինքը ուրիշների մոտ պարծեցել ե, վոր ինքը մեծ տղամարդություն և արել: Հիմի մենք կտեսնենք, թե ո՞վ և աղամարդը:

ՆԵՐՍԵՅՈՒԹ. — Մալրիկ, եղ ի՞նչ եմ յսում.

ԱՆՆԱ. — Խնայի՞ր նրան, նա չի կարող դիմանալ:

ՍԵՐՈԲ.—Իսկ դռւ, դու կարմղ ես դիմանալ Իսկ յե՞ս, իսկ մենք  
ամենքս կարմղ ենք դիմանալ

ՀԱԿՈԲ.—Աննա, Աննա, սա ի՞նչ խոսակցություն ե, վոր յեւ  
լսում եմ:

ԱՆՆԱ.—Յես վոչինչ չեմ իմացել, վկա յե աստված:

ՍԵՐՈԲ.—Յեկ հետո, լերը վոր ի՞նձ նման շառլատանը մին ծակ  
ու ծուկում շնություն անողի կեղտու գլուխն և թոցնում,  
թքում են նրա յերեսին, ձայն են աալիս՝ ավաղակ և նա,  
արյուն խմող գազան և նա: Յես ձեզ եմ հարցնում, պարոն,  
ի՞նչ կանելիք դո՛ւք իմ տեղ:

ԱԼԵՔԾ.—Յես նոր եմ իմացել, վոր պատիվը գողանալու բան ե:  
ՆԵՐՄԵՍ.—Վերջ զրեք ես խոսակցության:

ԱՆՆԱ.—(Բայելյաբար ծածուկ Մարգարիթ), հեռացիր, կորիր ելի:  
(Մարգար խեկույն զնում և աշ):

## ՏԵՍԻԼ 14

Հակոբ, Աննա, Ներսես, Սերոբ յեկ Ալեքսանդր

ԱՆՆԱ.—Տղամարդ եք դուք, բայց ի՞նչ խոսակցություն՝ եք անում  
աղիկարմատի մոտ:

ՍԵՐՈԲ.—Շարունակեցեք, պարոն. ի՞նչ ասացիք, թե պատիվն  
ի՞նչ ե յեղմի:

ԱԼԵՔԾ.—Յես ասում եմ, յես նոր եմ իմացել, վոր պատիվը կա-  
րելի յե գողանալ:

ՍԵՐՈԲ.—Ուրեմն ձեր ասելով մեր տունը մի պոռնկանց եր ձեզ  
համար:

ԱԼԵՔԾ.—Յեթե յես իմանալի, վոր դու իս այս տան տերը, գու-  
ցե յես իսկի վոտս ել չգնելի ալստեղ:

ՍԵՐՈԲ.—ԱՌ ... դուք լավ եք ճանաչել ձեր մարդին. Թողեք, վոր  
մենք ել ձեզ լավ ճանաչենք: Ի՞նչ ե ձեր միտքը հիմա:

ԱԼԵՔԾ.—Բայց միթե այս ըոպելիս և ալզպես վռադ կարելի յե  
պատասխան պահանջել, առանց թողնելու, վոր մարդ մի  
լավ մտածի:

ՍԵՐՈԲ.—Ամ, բայց միթե նոր պիտի մտածեք: Իսկ ես տան  
պատիվը գոտնակոխ անելուց առաջ:

ԱԼԵՔԾ.—Զգիտեմ ի՞նչ ես ուզում ինձանից: Շատ կտիպես, յեւ  
ել կասեմ...

ՍԵՐՈԲ.—Ի՞նչ կասես:

**ԱԼԵՔՍ.**—Ինչ վոր կուզես, հասկացիր:

**ՍԵՐՈԲ.**—Պարզ ասա:

**ԱԼԵՔՍ.**—Ցես արդեն ասացի:

**ՍԵՐՈԲ.**—Ուրեմն դու մերժմամ ես: Զե, դու ել մերժել չես կարող, խելքդ գլուխդ հայլաքիր, լես ասացի, վոր եսոր դատաստանի որ եւ:

**ԱԼԵՔՍ.**—Ինչպէս, ուրեմն դու կարծում ես, վոր ինձ կստիպես զռո՞մ:

**ՍԵՐՈԲ.**—Այո, լես քեզ կստիպեմ զռո՞մ: Յերդվում եմ սրա կաթով, վոր դու իմ ձեռքիցս չես պըծնիլ Խելքի լեկ և ամենքիս առաջ յերդումն արա:

**ԱԼԵՔՍ.**—Ի՞նչ ե, ինձ սպառնալի՞ք ես տալիս: Դու գիտե՞ս՝ ում հետ ես խոսում: Բավական ե ձախն տամ, և ամբողջ քաղաքը վոտքի կկանգնի:

(Հետեւվյալը կատարվում երադեյաբար):

**ՍԵՐՈԲ.**—Դե ձախն տուր, շուն շան վորդի ...

**ԱԼԵՔՍ.**—Ապա մի համարձակվիր:

**ԱՆՆԱ.**—Աստծո սիրուն խնալեցեք:

**ՍԵՐՈԲ.**—Թողեք, ասում եմ:

**ՆԵՐՍԵՍ.**—Սերոր, Սերոր:

**ՀԱԿՈԲ.**—(**Սլեքսանգրիփ**): Հեռացեք, հեռացեք:

(Մինչ այս Մարքան դռնից տեսավ այս յեզ նշաց):

## ԴՈՐՃՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

Բեմը ներկայացնում ե յերկրորդ գործողության տեսարանը: Ազ կողմ ավելացրած ե մի հասարակ մահնակալ, մի բարձ վրան:

### ՏԵՍԻԼ 1

Մարքա յեկ Հակոբ

**ՀԱԿՈԲ.**—Ի՞նչի՞ չեն հավատում մարդիկ, վոր մեզ ամեն նեղությունից, ամեն վաստ բանից, ամեն մոլորությունից փրկողը բանին աստծո խոսքն ե: Տեսնո՞ւմ ես ինձ. կցցեմ ինձ կտուրից և անմշաս կմնամ, վորովհետև հավատը պինդ ե իմ մեջ: Ը... իսկ դժւ... լեթե դու հավատով լսած լինելիք

ասածներս, ոու մեղքի մեջ չելիր ընկնիլ Ասում ելի քեզ  
«Մարթա, սիրե՛ր ասածո խոսքը»:

**ՄԱՐԹԱ.**—Յես կսիրեմ:

**ՀԱԿՈԲ.**—Կսիրեմ... Դու խալտառակեցիր ինձ, խեղղեցիր ինձ,  
Բավական եւ:

**ՄԱՐԹԱ.**—Ռուր ես գնում: (Թոնում եւ նուն):

**ՀԱԿՈԲ.**—Ռուր եմ գնում: Գնում եմ գործ պտում, պարտք առ-  
նեմ, տանը հաց չկա: Գնում եմ Մինասին կանչեմ, վորդիս-  
ձեռքից գնում եւ:

**ՄԱՐԹԱ.**—Զե, յես լսեցի, յես իմանում եմ վորտեղ ես գնում:  
Աստծո սիրուն, թողեք եկ բանը... մի՛ գնալ:

**ՀԱԿՈԲ.**—Ա՛ա, հիմի յել գոտն յետեկից ականջ գնելն ես սկսել:  
Դե վոր իմանում ես, իմացիր Այո, յես գնում եմ նրանց  
մոտ. յես նրանց գնուը կկոտրեմ. յես կրոնեմ նրա շառլա-  
տան հոր ոձիքից և կասեմ. «Քո լիրը և անզգամ վորդիդ  
յեկել և գլխից տարել եմ աղջկանս. յեթե նա նրա վրա չի  
պսակվիր, յես ամենքիդ քաշ կտամ դատարանի առաջա-  
Այո, նրան ել, վորդուն ել, մորն եր Որ ծերության, մի-  
վոտս գերեզմանի մեջ, յես չեմ կարող տանել ես անպատ-  
փությունը. ՚Ի՞ն կաց, ել դանակը վոսկրին ես հասցըել:  
Հեռացիր:

**ՄԱՐԹԱ.**—Մի գնալ, ինձ մենակ մի թողնիլ եստեղ:

**ՀԱԿՈԲ.**—Զայնդ, ձայնդ! (Գնում եւ միջի գոնով):

## S E U H L 2

### Մարքա յեկ Ալեքսանդր

**ԱԼԵՔՍ.**—(Ձայն կողմից): **Մարթա:**

**ՄԱՐԹԱ.**—Ռո՞ հեռացնք եստեղից. Յեթե մեկը ես ըոպելիս հենց  
հստեղ տեղնուտեղը ինձ շանսատակ աներ, հավատացնում  
եմ, նա մի բարի գործ կլիներ արած:

**ԱԼԵՔՍ.**—Յերեխա մի լինիլ. Դու առաջինը չես և վերջինն ել  
չես լինիլ Միայն ձեր ընտանիքն ե, վոր ալդ դատարկ բանը  
այդքան մեծացնում ե, Մալրեր կան, վոր իրենց ձեռքովն են  
ծախում իրենց աղջկան, իսկ դու հո, փառք աստծո, քո  
կամ քովդ ես յեկել

**ՄԱՐԹԱ.**—Յես կարծում ելի, վոր սերը կարող ե միայն սուրբ  
լինել. Յես աշխարհից ավելի մեծ բախտ չելի սպասում

Դուք իմացաք, վոր յես մի անփորձ աղջիկ եմ, լեկաք և  
ինձնից գողացաք իմ սիրտը: Հիմի յել չեմ իմանում, ել  
թնչ եք ուզում ինձնից:

ԱԼԵՔԱ. — Բայց յեթե քո տիս սրիկա յեղալրդ մեջտեղ չմտներ,  
ով եր իմանալու, թե դու իմ սիրեկանն ես:

ՄԱՐԹԱ. — Բայց միթե նրան յես ելի ասել:

ԱԼԵՔԱ. — Յերկի հարբած ժամանակս բերանիցս խոսք եմ բաց  
թողել ընկերներիս մոտ, անպիտանները նախանձից տա-  
րածել են: Ներիր ինձ:

ՄԱՐԹԱ. — Յերկի ձեզ համար մի դատարկ բան ե յեղել խարել,  
անրախտացնել, դեռ շպրտել ե հետո անամոթի պես ներո-  
ղություն խնդրել:

ԱԼԵՔԱ. — Դու թնչ գիտես, վոր յես քեզ առաջվանից ել ավելի չեմ  
սիրում:

ՄԱՐԹԱ. — Միթե դուք կամենում եք, վոր յես հիմարս ելի հա-  
վատամ ձեզ: Թե՞ դուք կարծում եք, վոր յես վերջի ամոթն  
ել կմոռանամ և կշպրտեմ ինձ փողոցի մեջ տեղը:

ԱԼԵՔԱ. — Խսիր, թե յես ինչ եմ մտածում: Ահա մի աղքատ աղ-  
ջիկ: յես սիրահարվել եմ նրա վրա, պսակվել և բերել մեր  
տուն: Շատ լավ: Հիմա դու ինքդ յերեակալիր, թնչ կլիներ  
քո դրությունը մեր տան մեջ, Ծնողներս կտեսնելին, վոր  
դու վոչ քաղաքավարի նստել գիտես, վոչ խոսել. հմ, մինչև  
անգամ դու պարել չգիտես: Մալրս քեզ հետ վոչ մի տեղ  
չեր գուրս գալ, հալըս ամեն որ յերեսովդ կտար, վոր դու  
մի քաղցածի աղջիկ ես, և վոր մի սրիկա յեղալր ունես:

ՄԱՐԹԱ. — Իսկ դժւք ինչ կանելիք:  
ԱԼԵՔԱ. — Վոչինչ. կարդղ ելի ծպտուն հանել, վոր վաղվան որը  
յերկուսիս ել տանից դուրս հանելին: Սրա համար ել ասում  
եմ քեզ, ապրենք ծածուկ, մինչև վոր նրանք գլուխները  
գետնին կդնեն:

ՄԱՐԹԱ. — Վոչ ամոթ կա ձեր յերեսին և վոչ ել աստվածանից  
եք վախենում: Թող յես խարված լինեմ, թող յես անպատ-  
ված լինեմ, բայց իմանալով, խելքս գլխիս յես ինձ ծախել  
չեմ թույլ տալ, — թե՞կուզ թագավորություն խոստանաք ինձ:  
Յես ավելի շուտ ինձ կախ կտամ, բայց ձեզ նման մի մոլորեց-  
նողի յետեկից ել չեմ գալ: Յես հավատացի ձեր սուտ յեր-  
դումներին, վորովհետեւ յես կարծում ելի՝ ձեզ ել մալր և  
ծնել, ես կարծում ելի, վոր դժւք ել մի քույր ունեք, յես

կարծում ելի, վոր դնուք ել մի մարդ եք: Սրանից հետո ինձ համար բոլորը անցավ: Յես ձեզ տեսնել անդամ չեմ ուզում: Յես զգում եմ ձեր լիրը անամոթ դեղքից:

**ԱԼԵՔՍ.**—Իմացիր, յեթե առաջվա պես իմ ձայնը լսելուս գաղանի տեսության չեմ գալ, յես վոչ վոքից չեմ ծածկիլ, վոր դու իմ սիրեկանն ես:

**ՄԱՐԹԱ.**—Իսկ յես ել ձեզ ասում եմ, վոր յեթե ձեր ձայնին ձայն տվող չեղավ, պառեցնք ձեր սիրեկանին ես ջրհորի մեջ խեղդված: Հեռացնք, թե չե ես բոպելիս կրղավեմ:

**ԱԼԵՔՍ.**—Յես մի քայլ ել չեմ անիլ:

**ՄԱՐԹԱ.**—Ո՛՛, զգվելի, զգվելի: (Գազում և աշ գռնով):

**ԱԼԵՔՍ.**—Միթե ճշմարիս նա հավատացած ե յեղել, վոր յես նրա նմանի վրա թուզլ կտայի ինձ պսակվել: Տես սիրաց ինչ և ուզել Բայց յես զիտեմ. կնոջ համար առաջի սիրածը միշտ քաղցր ել կմնա: Ինարկե, մի առ մամանակ նա կկոտրտվի, կձևացնե իրեն, վոր իմ առաջարկությունը նրան խորթ թվաց, հետո ելի, քիչ-քիչ-ինձ մոտ կգա: Հարկավոր ե պառավերի հետ հաշոտություն գցել: Հնար չկա. ալդ քաղցածների աչքը միայն փողով կարելի կլինի կուրացնել: Այդ խայտառակությունից հետո արգուք կգտնվի՞ մի հիմար, վոր պսակվի նրա վրա: Տեսնենք հի կհամարձակվի: (Գանում և հաթի):

### ՏԵՍԻԼՅ

Աննա յեվ ներսես

**ՆԵՐՄԵՍ.**—(Վաճում և աշ գռնով): Մալրիկ, չքաշվենք մեկդմենից, պարզ խոսենք: Անցածը անցել ե, ել հո չեք տանջելու նրան: Ինչի՞ չեք թողնում նա յել դա, նստի մեզ հետ: (Յերբեմն քերվում և մահճակալի վրա):

**ԱՆՆԱ.**—Վո՞չ եր ծնվել անզգամը: Սա մը ե, վոր մենք ենք քաշում: Առաջ մի կտոր հացի հոգսն եր ինձ մաշում: Հիմի մի կողմից են մեռածի հոգսը, մյուս կողմից քո՞ հիվանդությունը, հիմի յել ես անբախտությունը: Միթե աստծո լերկնքի տակ մենք մի որ չպետք ե տեսնենք: Ախը ինչո՞ւ յե նա եղքան խոռվ կացել մեր գլխին: Շատ բան ելինք ուզում քեզնից, աստված: Ախը մեր մեղքը թնչ ե, ալ վորդի:

ՆԵՐՄԵՍ. — Բայց եղ անզգամ շան ծնունդները մւմ ասես չեն  
խարում: Մի կողմից ել Մարթալին մեղագրել չի կարելի.  
խեղճ յերեխան աչք ե բացել թե չե, տեսած լսածը ախ ե  
յեղել, վախ:

ԱՆՆԱ. — Ի՞նչ անենք, վոր մեր ճակատին եղանակ ե գրած, վեր  
կենալինք աստծո հետ կո՞մի անելինք: Խեղդվեր ու պըրծ-  
նելինք նրա յերեխից:

ՆԵՐՄԵՍ. — Ի՞նչ ես ասում, մայրիկ, քո սիրաը բոլորովին փոխ-  
վել ե:

ԱՆՆԱ. — Քար կտրվեր նրա սիրաը, ինձնում սիրու ե մնացել:  
ՆԵՐՄԵՍ. — Տեսնել նրան վոչ թե խարված, ալլե խեղդված... ել  
մւմ վրա յես դնում քո հուկսդ, խեղճ պառավ:

ԱՆՆԱ. — Ավելի լավ եր խեղդված լիներ, քանց եսպիսի մեկ դժոխ-  
քի պատիժ բերած լիներ մեր գլխին: Գիշեր ցերեկ ցավս  
կու տալով յես խեղդվեցի:

ՆԵՐՄԵՍ. — Բավական ե, մայրիկ, կանչիր նրան: Յես ուզում եմ  
քո մոտ մի քանի խոսք ասեմ նրան: Են Մինասը ուզում  
ե նրան:

ԱՆՆԱ. — Միթե յես նրան մի սափրիչի համար ելի աչքիս լուկսի  
պես պահել մեծացրել... ենտեղը հասցրեց, վոր նրան ել  
արժանի չենք:

ՆԵՐՄԵՍ. — Ի՞նչի՞ համար:

ԱՆՆԱ. — Ասում ես պարզ խոսենք: Զի՞ վոր են որվա խալտառա-  
կությունի մասին նա յել լսած կլինի: Ուզում եք մի նոր  
խալտառակություն ել հետո դա գլխներիս:

ՆԵՐՄԵՍ. — Ո՞վ գիտե, կարելի յե խեղճ տղան ենքան ե սիրա-  
հարվել Մարթալի: վրա, վոր եղ բաները իսկի ականջը չէ  
մտնում:

## ՏԵՍԻԼ 4

Աննա, Ներսես յել Սերգի

ՆԵՐՈԲ. — (Դալիս ե միջին գոնով): Կարելի՞ յե մասնակցել ձեր  
ծածուկ խորհրդին:

ՆԵՐՄԵՍ. — Լավ բոպելին յեկար, Սերոբ ջան: Մեջտեղ մի հարց  
կա, վորի վճռելու մեջ դու յել ձալն ունես: Ընտանեկան  
խորհուրդ ե:

ՆԵՐՈԲ. — Ընտանեկան խորհրդությ Շատ լավ: Դե ասացնք տես-

ՆԵՆՔ բանը ինչում եւ: Տղա իրք ուզում պսակել, թե աղջիք  
եք ուզում գլխից ուադ անել: Յեթև խոսքը իմ մասին եւ լի-  
նելու, ինգրեմ նեղություն չքաշեք, վորովհետեւ լես մտքումս  
դրել եմ վարդապետ ձեռնազրվեմ:

ՆԵՐՍԵՍ.—Մի ծիծաղիլ: Զես իմանում, վոր սրանով մալրիկի-  
սրափն ես կպչում:

ԱԵՐՈԲ.—Հա, մալրիկ! Սրափի կպահ:

ԱՆՆԱ.—Դու չլինեցիր, եղ խայտառակությունն ել եղակես չեր-  
րացվիլ: Յերբ ես ճանապարհ գալու, վորդի:

ԱԵՐՈԲ.—Ի՞նչ ճանապարհ մասին եւ Փաղ ես ուզում. համեցնք:  
(Մի բուռ փող կապած զցում և սեղանի վրա): Ծախսիր,  
խմիր, քեփ արա:

ԱՆՆԱ.—Յետ վեր առ, քո փողդ մեզ հարկավոր չի:

ԱԵՐՈԲ.—Հասկանում եմ, մալրիկ! Դու կարծում ես խփած ենու  
Զե, սխալ ես: Հիմի խփելը թողել եմ և գտել եմ ավելի ազ-  
նիվ փեշակ.—Խաղացող եմ գառել: Աստված զորություն  
տա մեր տղերքոնց մեջքին. ես գիշեր բախտը շուռ տվալ  
իմ կողմը և զորս դու պատվիրեցիր, թիվրոտեցի անիրավ-  
ներին:

ՆԵՐՍԵՍ.—Յետ վերցրու: Զես իմանում, վոր նա ձեռք չի տալ:  
ԱԵՐՈԲ.—Վոչինչ. մուռտառ եք հաշվում, թող նա իմ գըպանումս  
մնաւ: (Դեռում և գրպանք): Սև որի համար հարկավոր կպա-  
թե զոնե ասացեք տեսնենք: Ինչու լե աչքունքներդ կախ:

ԱՆՆԱ.—Յերբ և մեր աչքունքը բաց լեղել:

ԱԵՐՈԲ.—Ինձ հարցնես, վողջ աշխարհը չարժի մարդիս մի կա-  
թիլ արտասուքին անդամ: Աշխարհը արժանի լե, վոր միայն  
թքես նրա լերեսին և կոխ տաս: (Անում ե):

ՆԵՐՍԵՍ.—Դնա, մալրիկ, կանչիր Մարթակին. թող Աերոբն ելիք  
կարծիքը հալտնի: (Անեան զնում և աշ զոնով):

## ՏԵՍԻԼԾ

ՆԵՐՍԵՍ լեվ Սերոբ

ԱԵՐՈԲ.—Ճշմարիտ ասեմ, թեպետ դու ինձ պատիվ ես անում,  
բայց լես ընտանեկան գործերում չկամ: Յետ նրա լերեսը  
տեսնելու չեմ լեկել: (Նայում և ալս լեզ այն կողմ):

ՆԵՐՍԵՍ.—Սերոբ, լես իմանում եմ դու ինչու լես լեկել:

ԱԵՐՈԲ.—Իմանում ես, իմացիր:

**ՆԵՐՄԵՍ.**—Դուք են անպիտանին ես պտռում. աստծո սիրուն,  
թող մնա քո եղ մտադրությունդ: Մարդ սպանելը դժվար  
բան չե, ճշմարիտ ե, դու կսպանես նրան. բայց սպանելով  
նրան, դու կսպանես մեղ ամենքիս: Մեկ մտիկ արա, ի՞նչ  
կլինի ես խեղճերի գրությունը:

**ՍԵՐՈԲ.**—Ի՞նչ եք ուզում ինձանից, ի՞նչ եք ուզում ինձանից:  
Դուք ուզում եք ամեն մի շունի ցած արարմունքը առանց  
պատժի մնա:

**ՆԵՐՄԵՍ.**—Հանդարտ, նրանք կլսեն:

**ՍԵՐՈԲ.**—Ցես իմանալով եմ ձայնս գլխիս դցում, թող թեկուղ  
արար աշխարհը լսի:

**ՆԵՐՄԵՍ.**—Բայց մեկ մտածիր, ով ենք մենք:

**ՍԵՐՈԲ.**—Ախ, ինչու յես քեզ եղպես քաշացնում, ապեր, հըմ, «ով  
ենք մենք»:

**ՆԵՐՄԵՍ.**—Ի՞նչ ե, դու կարծում ես քո ասածներդ յես չեմ հաս-  
կանում:

**ՍԵՐՈԲ.**—Տեսնում եմ: Թո սեփական մսիցդ քեզ խորոված են  
ուտեցնում, իսկ դու լուս ես:

**ՆԵՐՄԵՍ.**—Ի՞նչ անենք, աղքատության դեմ կոիվը թողնում ե  
մեղ աչք բացել:

**ՍԵՐՈԲ.**—Սա յե ձեր կոիվը:

**ՆԵՐՄԵՍ.**—Ապա ի՞նչ ե: Զար բախտի դեմ չենք կոիվ անում:  
Յեթե չանենք եղ կոիվը, չե վոր մեր վողջ ընտանիքը  
կլնջվի աշխարհի տերեսից: Սերոր, հոգիս, ի՞նչ անենք, վոր  
փոքր ենք, բայց չե վոր մենք ել մի տուն ենք, ինչու  
թողնենք, վոր մարվի մեր ճրագը:

**ՍԵՐՈԲ.**—Վայ, ես մարվող ճրագին, վոր մեղ նմանների լուզով  
պետք ե վառ մնա:

**ՆԵՐՄԵՍ.**—Մի ասիլ, նամուսով մարդը ինչպես ել լինի, մի կտոր  
հաց կճարի իրա ընտանիքը պահելու համար:

**ՍԵՐՈԲ.**—Հաց, հաց. եղ մի կտոր հացը հո շունն ել ե ճարում:

**ՆԵՐՄԵՍ.**—Յեթե դու յել ինձ հետ մեջք մեջքի տված լինելիք, մեր  
դրությունը ես որին չեր հասնիլ: Յես ել հազիվ վեր կե-  
նամ ես հիվանդության ձեռքից, իսկ դու չես խնայում մեր  
պատիվը:

**ՍԵՐՈԲ.**—Հըմ, ցեխի մեջ արորված մեր պատիվը:

**ՆԵՐՄԵՍ.**—Ուրեմն ի՞նչ անենք:

**ՍԵՐՈԲ.**—Յերկուսից մեկը պետք ե սպանվի, ապեր:

ՆԵՐՄԵՍ. — Ի՞նչ:

ՍԵՐՈԲ. — Յերկուսից մեկը, կամ պետք և մորթել մեկին, կամ շանսատակ անել են մուսափին:

ՆԵՐՄԵՍ. — Ինչը ես խոսում:

ՍԵՐՈԲ. — Եղ տեսակ կեղաց պետք և արյունով լվացվի:

ՆԵՐՄԵՍ. — Յես քեզ ասում եմ խաղաղ ապրուստի մասին:

ՍԵՐՈԲ. — Իսկ յես քեզ ասում եմ, եղ տեսակ ապրելը ցածություն եւ ինձ վրա պետք եւ ծիծաղեն, տնադ անեն, անունն կնիկ զնեն, իսկ յես ապրելու մասին մտածեմ: Չե, եղ մեկը Սերոբը չի կարող: Նա չի կարող իրա անպատճան քրոջ յերեսին մտիկ անելի նա տղամարդ եւ, գլխին գդակ ունի դրած: Եգուցվա որը ուրիշները վոր լսեն, մարդիս ճակատի մեջտեղին կթքեն: Ինձ ստեղծողը ինձ մեկ անլեզու անառուն չի ստեղծել: Եղ մեկը, ապեր, խնդրում եմ, թող իմ հոգիիս պարտաքը լինի:

ՆԵՐՄԵՍ. — Յես նրանց համար եմ ասում, նրանք ապրել են ուղում:

ՍԵՐՈԲ. — Սրանից հետո նրանք ապրել են ուղում: Մահը հո նրանց համար մին աստծո վողորմություն եւ Թող նա ապրի, վորի համար փակ դուռ չկա, վորի համար ցածությունը տղամարդություն եւ, վորը (ցած) աչքիդ առաջ քրոջդ պոռնիկ կոչեց: Ել Ի՞նչ ես ուղում: Եղ անպատճությունից հետո դու գեռ ապրելու մասին ես խոսում: Չե, ապեր, բանտ շատ եմ նստել, բայց վոտքիս վոսկորները քոր են գալիս, պետք եւ բրասլետներ հագնել և մին Սիրիբի կողմերն ել վիզիտ անեմ: Սերոբի մեռած հրը պետք ելինի, վոր նրանց տունը սուգի տուն չշինի:

ՆԵՐՄԵՍ. — (Թուլացած): Գլուխս կարծես մի դատարկ տարածություն լինի, չորս կողմից նրա պատերով թափվում են յետ յեկած կաթիլներ: Ես գարունը ինձ վախեցնում եմ, Սերոբ: Քաղցը եւ կլանքը. յես ուղում եմ, Սերոբ, ներել մարդկանց բոլոր մեղքերը, յես ուղում եմ ապրեր...

ՍԵՐՈԲ. — Տա աստված, վոր դու լավանաս և ապրես, ապեր, իսկ յես, եհ... (Մասկ Մինասը միշտ դոնից):

## ՏԵՍԻԼ 6

Ներսես, Սերոբ յեկ Մինաս

ՄԻՆԱՍ. — Բարի որ ձեզ:

ՆԵՐՄԵՍ. — Բարով, վարպետ:

**ՄԻՆԱՍ.**—Կարելի՞ լե հարցնել, ինչպէս ե զգում իրեն ներսեսը։  
**ՍԵՐՈԲ.**—Համեցնք։

**ՄԻՆԱՍ.**—Դու լես ինձ համեցեք անում։ Ուրեմն հաշտվենք։

**ՍԵՐՈԲ.**—Յես քեզ հետ խոռվ չեմ, վարպետ։

**ՄԻՆԱՍ.**—Դե, ձեռքդ, (Մեկնում ե ձեռքը)։

**ՍԵՐՈԲ.**—Բանիր հիվանդի ձեռքը, անշնորք։ Յերևի նրա համար ես լեկել։

**ՄԻՆԱՍ.**—Ուզիդ ես հրամալում։ (Թռնում ե Ներսեսի ձեռքը)։

Վարպետ Հակոբը ինձ ասաց, Ներսեսը մի քիչ իրեն լավ չի զգում։ Ուզիդը ասած, լես շուտոշուտ կգալի, բայց սրանց եմ քաշվում։ անհանգիստ աղա լե։ Ինչպէս ես։

**ՆԵՐՍԵՍ.**—Յես ինձ վատ եմ զգում։

**ՄԻՆԱՍ.**—Եստեղ շատ ել լով չի քեզ համար, պետք ե գնալ սենյակ։

**ՆԵՐՍԵՍ.**—Ենտեղ ել խոնավություն կա։

**ՄԻՆԱՍ.**—Հնար չկա, Ներսես, դու պետք ե ձեռք վեր առնես եղ թամբաքվի Փարքիկից։

**ՍԵՐՈԲ.**—Տո խելքի տոպրակ, եղ ճարերը հո լես ել եմ իմանում։

**ՄԻՆԱՍ.**—Յեկ լես քեզ մեր գյուղը հյուր տանեմ։

**ՍԵՐՈԲ.**—Խոկ ինձ, անշնորք, համեցեք չես անում։

**ՄԻՆԱՍ.**—Յես քեզ ել եմ խնդրում։

**ՍԵՐՈԲ.**—Ի՞նչ ես ասում, ապեր, չգնամնք։

**ՆԵՐՍԵՍ.**—Շնորհակալ եմ, վարպետ։ դու ինքդ ել իմանում ես, վոր մենք կարողություն չունենք, ենպես վոր վարձիդ մասին պետք ե ներես։

**ՄԻՆԱՍ.**—Յերբ վոր դուք ամենքդ մի որ գյուղում մեր տան մեջ հացի նստած կլինեք, եղ կլինի իմ վարձը։

**ՆԵՐՍԵՍ.**—Ինչքան ել լինի, վարպետ Մինաս, ապրուստը գլուղ դում հո ձրի չի։

**ՄԻՆԱՍ.**—Իհարկե ձրի չի, բայց դե եղքան ել հո թանգ չի։

**ՆԵՐՍԵՍ.**—Ի՞նչ իրավունքով քեզ նեղություն պատճառենք։

**ՄԻՆԱՍ.**—Վնաս չունի, յերբ վոր կհարստանաք, կվճարեք։

**ՍԵՐՈԲ.**—Տո անշնորք, եղ պայմանով լես հո Պարիժ ել կգնամ։

**ՄԻՆԱՍ.**—Բայց գիտեմ մեր գյուղի ողը ինչ ոդ ե։

**ՍԵՐՈԲ.**—Ասում են դրախտը ձեր տան լետեռնն ե լեղել և վոր Աղամը ձեր հանդումն ե թաղված։

**ՄԻՆԱՍ.**—Մեկ համեցեք մեր գինիի կարասները տեսնք, հետո կխոսենք, Յես քեզ պես չեմ։ Յես քեզ ենտեղ չեմ տսիլ, թե շեստեղ մեկը ավելորդ ե։

**ՍԵՐՈԲ.**—Ներիր, վարպետ, անցած բան եւ (Զեռք եւ բանում):  
ՆԵՐՄԵՍ. —Ախ, ինչքան կուրախանար հայրիկը, լերը եղ տեսներ:  
**ՄԻՆԱՍ.**—Դուք նրան մենակ միք թողնիլ փողոց. թե չե նա  
(նակատի վրա ցնորդած ցույց տալով) մի քիչ փոխված և  
լերեռմ:

**ՍԵՐՈԲ.**—Բանիդ կաց, վարպետ. ծերերի վերջն ե՝ կամ անգա-  
մալուզծ կկարեն, կամ խելքները տանուէ կտան:

**ՄԻՆԱՍ.**—Սերոք ջան, դու մի քիչ ներողություն անես:

**ՍԵՐՈԲ.**—Յերեկի խոստովանք ունեք, համեցնք: (Գնաց աշ կողմ):

## ՏԵՍԻԼ 7

ՆԵՐՄԵՍ յեվ Մինաս

**ՄԻՆԱՍ.**—Ներսես ջան, իես քեզ մի բան եմ ասելու. բայց խնաք  
տուր, վոր խոսքը մեր մեջ կմնա:

**ՆԵՐՄԵՍ.**—Խոսք եմ տալիս, բայց չեմ լերդվում, վորովհետեւ  
կյանքումս սուտ ասած չկամ:

**ՄԻՆԱՍ.**—Գիտե՞ս իմ միտքը ինչ եւ Յեսուզում եմ տնավորվեմ:  
Դու ինքդ ել տեսնում ես, վոր մեզ նման տնավորվածների  
համար ապրուստը քաղաք տեղում ինչքան ե դժվարացելի  
Դե, փառք աստծո, եղ նոր-նոր ցավերը հիմի գյուղերումն  
ել ե տարածվել Դոխտուրները հիարեկ պատիվ չեն անում  
գյուղ գնալը, ենպես վոր մեզ համար ենտեղ մի կտոր հաց  
ճարելը դժվար չի լինի: Բայց իմ միտքս, ինչ ասեմ...

**ՆԵՐՄԵՍ.**—Ասա, վարպետ, մի քաշվիլ:

**ՄԻՆԱՍ.**—Ասեմ, լավ. ասեմ: Ասա, Ներսես, ուզում ես, վոր մի  
նոր լեզրալը ել ունենաս:

**ՆԵՐՄԵՍ.**—Մենք առանց են ել լեզրալը ենք:

**ՄԻՆԱՍ.**—Հա, եղ մեկը եղափես եւ: Բայց իմ միտքս ուրիշ բան  
եւ Զեմ իմանում, հասկանում ես, թե չե:

**ՆԵՐՄԵՍ.**—Մի քիչ հասկանում եմ, բայց լեթե ել պարզ ասես,  
ավելի լավ հասկանամ:

**ՄԻՆԱՍ.**—Ինչպես ասեմ... Ներիր, լեզրալը, մարդ ենք:

**ՆԵՐՄԵՍ.**—Վոչինչ, ասան:

**ՄԻՆԱՍ.**—Ցեթե քաղաքում մալը կամ քուրս լիներ, բանը ավե-  
լի հեշտ կլիներ, վորովհետեւ իմ ասելիքս պետք ե կնիկար-  
մատ ասեր: Վարպետ Հակոբը արդեն իմանում ե, յես նրան

ասել եմ: Ի՞նչ ծտծկեմ քեզանից: Մի 2 անգամ տեսել եմ  
քրոջը, վերջը, հավանել եմ... սիրել եմ: Յես նրան ուղում  
եմ. կտաք՝ լավ, չեք տա՛ ելի դուք իմը, յես ձերը:  
**ՆԵՐՍԵՍ.**—Յեղբայր Մինաս, դու մեզանից ինչով ես պակաս,  
վոր մենք «չե» ասենք: Թեզանից լավ տղի ելինք տալու:  
**ՄԻՆԱՍ.**—Ուրեմն ես եղախ. սա վերջացավ: Բայց յես ելի մի  
բան պետք ե ասեմ: Դուք չկարծեք, թե յես ես քաղա-  
քումը ականջներիս բամբակ դրած եմ ման գալիս, վորով-  
հետեւ մի հանգամանք կա, վորի պատճառով դուք կարող եք  
մտքներովդ անցկացնել, թե յերեխ ես մարդը մի շատ միա-  
միտ մարդ ե և աշխարհից խելքը բան չի կտրում:  
**ՆԵՐՍԵՍ.**—Մինք:

**ՄԻՆԱՍ.**—Դուք... ինչպիս ասեմ: Դուք ել բերանով յերեսիս չեք  
ասիլ, բայց մտքներովդ ամեն ժամանակ կանցնի: Ինչեւ:  
Կարպետը ինձ համար շատ ե պատմել աստծո խոսքը... իմ  
արածը մի շատ ծանր բան ե, դժվար բան ե. (սաստիկ  
հուզված) Հազարից մեկը չի անիլ եղ բանը... Յեղբայր  
ներսես. յես ուղում եմ մի անմեղ հոգի ազատեմ: Յես ու-  
ղում եմ ազատել ձեր պատիվը, չե, չե, իմ պատիվը: Զե՞  
վոր նա յել իմ հայ քրիստոնյա քույրս ե: Ինչպես կուզես,  
ենպես հասկացիր: Յես պրծա:

**ՆԵՐՍԵՍ.**—Մինաս ջան (ուզում ե համբուրել նրա ձեռքը):  
**ՄԻՆԱՍ.**—(Յերբ բաօելով): Յես կսպասեմ պատասխանի:  
**ՆԵՐՍԵՍ.**—Ազնիվ տղա... Յես իսկուն կհալտնեմ Սերոբին: (Գնում  
ե Սերոբի զնացած կողմ):

## S E U T L 8

Մինաս յեվ Ալեքսանդր

**ԱԼԵՔԾՈՒ:**—(Զախ կողմից): Բարեկամ. դու իսկի բան-ման հաս-  
կանում ես. թե հենց իսկ են ասել, հիմար գլուղացի:  
**ՄԻՆԱՍ.**—Ի՞նչ ես ուղում:  
**ԱԼԵՔԾՈՒ:**—Յես առում եմ, դու իսկի բան-ման հասկանում ես:  
**ՄԻՆԱՍ.**—Յես իմ հասկացած ինձ համար շատ բավական եմ  
համարում, և սրանից ավելին չեմ ել ուղում հասկանալ:  
**ԱԼԵՔԾՈՒ:**—Յես քեզ ասում եմ, գիտեմ ինչ աղջիկ են կապում  
գլխիդ:

**ՄԻՆԱՍ. — Վաշվոք** իմ գլխին աղջիկ չի կապում: Աղջիկը իս իմ  
կամքովն եմ ուզել:

**ԱԼԵՔԾ. — Բայց** իս ուզում եմ քո աչքդ բացեմ:

**ՄԻՆԱՍ. — Իսկ** յս քեզ ասում եմ. բացիր դու քո աչքդ: Միթե,  
պարոն, մի մեղք բան ե, ինթե մարդ դավի բերանից մի  
գառ ազատի:

**ԱԼԵՔԾ. — Ի՞նչ:**

**ՄԻՆԱՍ. — Հրամմերես, իսկ ենպես, ինչպես հրամանքդ վոր հաս-  
կացավ:**

**ԱԼԵՔԾ. — Էսիր,** իմ գլուխս ալդպես բաներ չի մտնում: Յս քեզ  
խորհուրդ եմ տալիս, քանի վոր թեփուռդ ցրիվ չեն տվել,  
քո կամքովդ հեռացիր ալստեղից:

**ՄԻՆԱՍ. — Իմանմաւ ես ինչ կա, պարոն: Բոլորովին ել ասածուն-  
մուանալ չի լինիր Յեկ, յս ինդրում եմ, ինթե հայ ես,  
քրիստոնյա յս, արլունհեղութիւնը հեռացրու ես տե-  
ղերքից:**

**ԱԼԵՔԾ. — Յս քեզ ասում եմ, քանի վոր գլուխդ ուսերիդ վրան-  
ե, ել չհամարձակմես վոտքդ դնել այս կողմերը, թե չե-  
գլխիդ մի խաղ խաղալ կտամ, վոր յեկած ճանապարհդ  
կմոռանաս:**

**ՄԻՆԱՍ. — Իսկ յս քեզ ասում եմ, աչքդ բաց և մարդիդ լավ ճա-  
նաչիր: (Թռնում ե երա կոներից յեկ ուժգին երում յետ)...  
Գնա, կորիր հստեղից:**

**ԱԼԵՔԾ. — Յս քեզ ցուց կտամ: (Անհայտանում են նայս կող-  
մում):**

## S E U T L 9

Ներսես յիկ Սերոք

**ՆԵՐՍԵՆ. — (Գալիս են աշ կողմից): Սերոք, ել իսկի չասես, թե  
աշխարհը չորացել ե, և մեղ համար մարդ չկա: Ա՛յ մարդ:**

**ՆԵՐՈԲ. — Ի՞նչ ե ուզում եղ կողմանը:**

**ՆԵՐՍԵՆ. — Նա Մարթալին ե ուզում:**

**ՆԵՐՈԲ. — Դե ել ինչի՞ յեք սպասում, մվեք տանի, ելի:**

**ՆԵՐՍԵՆ. — Ուրեմն դու համաձմյն ես:**

**ՆԵՐՈԲ. — Յես. ո, յս սավրիչներին շատ եմ պատվում, վորով-  
հատե ինչ գոռող գլուխ ասես, վոր շխոնարհի նրանց մըկ-  
բատի տակ: (Վիճակում են):**

Ներսիս, Սերոբ, Աննա յել Մարքա

ՆԵՐՄԵՍՈՒ.—(“ՆԵՐԱԲԻ ՄԵԶԵԿ ԱՉ ԳՈՅՆԻՑ): ԽՈՍՔԻ, մալրիկ. դու գիտես,

թե մենք ինչ ելինք ուզում ասեմ!

ԱՆՆԱ. —Մալրիկը ի՞նչ խոսի: Նրա բերանում լիզու ի՞ն մնացել:

Մալրիկը խոսելու շնորհքն ել ե կորցրել խելքն ել:

ՍԵՐՈԲ. —Ուրիշման յես կիսում է: Խօսիր: Մարթա: Վարպետ Մինասը սիրահարվել ե քո վրա: —յերեկի իհարկե նա լսել ե քո տղամարդություններդ: —ի՞նչ ես հրամայում, ի՞նչ պատասխան տանք: ինքդ լավ ես իմանում, վոր ել են տեղը չի, վոր կոտրտվես, նազ անես, ուսովդ «չեմ իմանում» անես, գըլ-խովդ՝ «կմտածեմ»: Քեզ համար ել եղ տեսակ ցերեմոնիաների ժամանակը անց ե կացել Բայց դատարաններում մին լավ սովորություն կա: Աշկարա մարդասպանին ել հարցնում են, «վի՞զ ես տոնում, վոր մեղավոր ես»: Ինարկե, վոր հիմարը կասի, թե վի՞զ ե տոնում: Թաղաքավարությունը պահանջում ե, վոր մենք ել քեզ հարցնենք: Հավան ես:

ՆԵՐՄԵՍՈՒ.—Զե, Սերոբը եղած չի: Մարթա ջան. մեր գեմքին, մեր լեզվին .մի մտիկ անիլ: Մենք մեր սրտի խորքում ելի առ ռաջվա պես սիրում ենք քեզ: Զկարծես, վոր դու մեր աշ-քում մի ավելորդ բան ես, վոր մենք ուզում ենք գեն շպըրտել: Զե, աստված վկա, Մարթա, դու իմ աշքում ելի առաջվա իմ քույրս ես: Մինասի մասին միայն սա կասեմ, վոր քո մասին մին ենպես խոսք ասեց, վոր յես ուզեցի նրա վոաքերը համբուրել... Մնացածը դու յես իմանում: Մի քաշ-վիլ, կուզես «ալո» ասա, կուզես՝ «վոչ»:

ԱՆՆԱ. —Խոսիր ելի: ինչու ի՞ն լեզուդ քարին կապին դեմ ընկել: Ինչու յես պապանձվել, ասա, վոր չես ուզում:

ՍԵՐՈԲ. —Սպասեցեք: Ցես չեմ ուզում, վոր նա իր լերեսը իմ մոտս բացի: (Պածուկ՝ “Ներսեսին”): Փողերիս գլուխը քոր ե գալիս: Դու տեսնում ես, վոր նա համաձայն ե. յես գնամ պատրաստություն աեսնեմ (Գեաց միջին գոնով):

ՆԵՐՄԵՍՈՒ.—Բացիք սիրոտ մալրիկի առաջ: (Գեում և աչ):

Աննա յել Մարքա

**ՄԱՐԹԱ.**—Մալրիկ, ինչու յեք ինձ մորթում:**ԱՆՆԱ.**—Դու ինքդ ես մեզ առանց զանակ մորթել, մեղ ես առում:**ՄԱՐԹԱ.**—Ինչու ինձ գոնե մի անգամ չասացիք, վոր մարդիկ սուտ ասող են ինում, յերգումը ցեխի մեջ գցողի ինչու թողիք, վոր յես մոլորգեմ:**ԱՆՆԱ.**—Գիշեր ցերեկ քեղ չեմի ասում:**ՄԱՐԹԱ.**—Ապա ինչու ելիք թողնում, վոր են շունը վոտք դնի մեր տան մեջ: Յես հիմարացա, յս խարվեցի նրա լեզվին, յես կարծեցի, նա ինձ կը ախտավորեցնի: Յես թնչ իմանալի, վոր մինչև այդ աստիճան կարելի յե չխղճալ մարդուն: Ախ, ինչպես մարդիկ չեն վախենում աստվածանից: Բավական չե վոր նա ինձ խարեց, հիմի յել դռւք եք ուղում մի ուրիշին խարել:**ԱՆՆԱ.**—Խարել:**ՄԱՐԹԱ.**—Կարելի՞ յե, վոր նա վոչինչ լսած չլինի:**ԱՆՆԱ.**—Յես թնչ իմանամ, լսել ե, թե չե:**ՄԱՐԹԱ.**—Ապա յես թնչ սրտով գնամ նրան, յեթե նա չի իմանում: Յեվ թնչ աչքով պետք ե մտիկ անեմ նրան, յեթե նա հետո իմանա:**ԱՆՆԱ.**—Տանջանք ե, ելի:**ՄԱՐԹԱ.**—Յեթե մեղք չլիներ, վաղուց յես վերջ դրած կլինելի իմ կլանքիս: Կրակի մեջ երգում եմ, մալրիկ, Գիշեր ցերեկ յես աստծուն խնդրում եմ ինձ ների: Բայց յեթե դուք չեք ներում, վժրտեղից նա ինձ կների: Գոնե դռւ ինձ ներից, մայրիկ, ախ չե վոր դու առաջ ինձ սիրում ելիր: Միթե հավիտենական ընկամ յես քո աչքում:**ԱՆՆԱ.**—Թող աստված ների քեզ...յես թնչ ասեմ: Ինչ կը ակ մաղվեց իմ գլխիս: Թո անբախտությունը լեզուս կապեց, սպանեց ինձ... ախը չե վոր ամենքիս ուրախությունը մենակ դռւ ելիր, իմ խեղճ յերեխա:**ՄԱՐԹԱ.**—Կարգաղեցնք իմ վիճակը և ում ուզում եք, տվեք, միայն թե նա իմանա, վոր յես մի անփորձ յերեխա յեմ լեղել, մոլոր վել եմ, սխալվել եմ, թող առաջ նա ինձ ների, հետո ին-

քը գիտես: Յեթե նրան ել արժանի չեղա, զցեցնք ինձ տան  
մի անկյուն, կապեցնք յերեսիս դուռը, թող ենտեղ կծկվեմ  
և մինչև կլանքիս վերջը քավեմ իմ մեղքը: Յերեի իմ ան-  
րախտ ճակատիս եղ եր զբած:

ԱՆՆԱ.—Զե, չե: Եղակես մի ասիլի Գոնե զաւ ապրիք և որ տես:  
Մենք մի բախտավոր որ չենք տեսել անտծո յերկնքի տակ:  
Վոչ մի մարդ մեր նեղությունումը մեր դուռը չի ծեծել, մեզ  
չի հարցրել Եղ խեղճ տղին ե, վոր մի քիչ մեզ ձեռք և  
բռնելի Կարելի յե նրա հետ դու ավելի բախտավոր ես լի-  
նելու... չե վոր հայրդ ասում ե, վոր նա մի բարի տղա յե:  
ՄԱՐԹԱ.—Յեթե նա բարի կլինի և հետո, յես ամեն կերպ կաշ-  
խատեմ, վոր նա բախտավոր լինի:

ԱՆՆԱ.—Աստված տան, վոր դուք բախտավոր լինեք, վորդի:  
ՄԱՐԹԱ.—Միայն թե թող նա ինձ տանի, հեռացնի հստեղից...  
վոր ամեն ինչ մոռացվի: Ախ, ինչքան եմ դառնացրել ձեր  
որերը: Դե գոնե հիմի թող մեկ լսեմ քո քաղցր բերանից  
իմ անունը:

ԱՆՆԱ.—Մարթա, Մարթա (Փարարփում են): Շատ արտասուք  
թափելուց աչքերս են քոռացել:

## ՏԵՍԻԼ 12

Մարթա, Աննա, Ներսես յել Մինաս

ՆԵՐՍԵՍ.—(Մօնում են աջից): Հա, եղ լավ ե: Արտասուքը շատ  
ցավիր ե լվանում,

ԱՆՆԱ.—Նա համաձայն ե:

ՆԵՐՍԵՍ.—Աստված քեզ նրա հետ բախտավոր անի, քուլրա:  
(Կանչում ե): Վարպետ Մինաս: (Հազում ե սիրոք բռնե-  
լով):

ՄԻՆԱՍ.—(Զայտից): Յես ենքան ել հեռու չելի: Ինչու նեղու-  
թյուն տվիր քեզ:

ՆԵՐՍԵՍ.—Վոչինչ... անցավ: Հիմի խոսելու հերթը քոնն ե:

ՄԻՆԱՍ.—Մինչև եսօր յես քեզ մոր տեղ եմ հաշվել, եսորվանից  
ել դռւ ինձ քո վորդիդ հաշվիր: Խսկ քեզ, իմ հայ քրիստո-  
նյա քուլր: Բնչ ասեմ, իմ բախտիս աստված քեզ ե նշա-  
նակել, քո բախտիդ՝ ինձ: Աշխարհ ե, ինչ պետք ե անես:  
Եսպես ել ե լինում, ենպես ել: Եհ, փառք աստծու: Վարպետ

Հակոբի աղջիկ, հուլս ունեմ ել չասես, թե աներեսի մեկնեմ, մտել եմ ենտեղ, վորտեղի ինձ համեցեք չեն արելու ՆԵՐՄԵՍ.—Հա, հա, հա... եղ թիշ նոր բան ե (Հազում ե). ՄԻՒԱՍ.—Չե, ել չխռոս, ներսես... վնասում ե քեզ (Կատակալի վրա).

## S E U H L 13

Աննա, Մարքա, Ներսես, Մինաս յել Սերոք

ՍԵՐՈԲ.—(Միշին գոնով): Կարծեմ արդեն կարելի յե շնորհավորելու հեր (Հանում ե զանազան գրպանեներից ողի): Սա վորացավի ճար, (զինի) սա գլխացավի (հետ բաժակներ, հացապանիր յեվ այլն): Դե մալլիկ (ածում ե զինին յեվ առևու): Ապա մի որհնիր: Են ինչպիս են ասում. «որհնեմ, որհնեմ զորանաս, կանաչես չչորանաս, զինի խմես քոռանաս»... ԱՆՆԱ.—Վոզորմած աստվածը լսի իմ մեղավոր քերանիս որհնանքը: Վատ որ չտեսնեք, սիրնվ ծերանաք, (Խմում ե զինին): ՍԵՐՈԲ.—(Լրացնելով երա ասածը): Մի բարձի տիրանաք, հմ: Անուշ: Դե վարպետ, տեսնեմ գռ ինչպես ես սիրում նշանածիդ: (Խմում յեվ աւլիս ե երան զինին):

ՄԻՒԱՍ.—Լավ ձեռքի յե:

ՍԵՐՈԲ.—Բոնիր, ասում եմ (Մինասը բռնելուս, յե ե բառում, ուզում ե խմել, նորից աւլիս ե երան): Չե, վարպետ, լես սրանում չկամ, բռնիր, իմը եղ առյուծի կաթն եւ: (Յալիս ե երան զինին, իրա համար ածում ե ողի): Դե, աստված շնորհավոր արասցե: Ցեթե ուզում ես հարսնացուդ քեզ շատ սիրի, լավ քամիր: (Խմեց):

ՄԻՒԱՍ.—Կենացդ, վարպետի աղջիկ: (Խմեց):

ՍԵՐՈԲ.—Մինչեւ տակը, մինչեւ տակը: Այ եղակս: (Ածում ե զինի յեվ աւլիս ե ՆԵՐՄԵՍԻՆ): Խմիր, ապեր, սա ամեն հիվանդությունների ճար ե, ոչի կծածից մինչեւ մարդի կծածը:

ՄԻՒԱՍ.—Նրան վոչ թե խմելը, խնսելն ել ե վնաս:

ՍԵՐՈԲ.—Վոչինչ, յես կխռոսեմ նրա տեղ. «Սերոբ, յետ դառ վատ ճանապարհից և լավ մարդ դառ»: Շատ լավ ապեր: Ասենք թե եսորվանից խռոք տվի յես ել լավ մարդ դառնամ: Բայց չե՞ վոր եստեղումս (սրբում) կա մի ցավ, մարդուն խելքից հանող մի ցավ: Նա չի թողնում ինձ, վոր յես ել հաշտ աշ-

քով մտիկ անեմ աշխարհիս չարութլուններին, նա չի թող-նում, վոր լես ել կեղծ ժպտամ, սողամ փորիս վրա և լի-զեմ ինձ կոխ տվող վոտքերը, Շատ անդամ մտածում եմ, ոքեզ ի՞նչ, վոր աշխարհը լի լի անարդարութլունով և զըս-կանքներովց։ Բայց չի լինում. նա զարթնում ե և ասում՝ զբուխդ բարձր բռնիր, աչքերդ համարձակ, կուրծքդ հպարտ։ Տուր, խփիր, ջարդիր, քեզ հանգստութլուն չկա: Յեթե դուք, ապեր, կարողացաք եղ փոքրիկ սատանալի գլուխը ջարդել ես տեղում, լեթե դուք ինձ կարողացաք բժշկել եղ ցավից, լես ել խոսք եմ տալիս ձեզ լավ մարդ դառնալ։ (Խմբեց):

## ՏԵՍԻԼ 14

Աննա, Մարտա, Սերոբ, Ներսես, Մինաս յել Հակոբ

ՀԱԿՈԲ. — (Առաջ բեմի հետեւկից լսվեց երա հառաչանքը «ա՞հ, ա՞հ», հետո նա մօավ սեվ վերարկվի վերի կոճակները բաց, փոսիի մեջ կօրած, զլիսաբաց յեվ մազերը բերված), Մարթա, իմ Մարթա։ Յես տեսա նրա հորը, նա փողոցի մեջտեղով անցնում եր կառքի մեջ, Յես վազեցի նրա վրա. բռնեցի կառքից և ասացի. Հիսուսի անունով ասում եմ քեզ, կանգնիր, յետ տուր ինձ իմ ընտանիքի պատիվը։ Իսկ նա վոտքով խփեց կրծքիս, «Խելքից ցնորված ե» ա-սաց, զցեց ինձ հողերի մեջ, քշել տվավ առաջ։

ԱՆՆԱ. — Ի՞նչ ե պատահել քեզ, խեղճ մարդ, մւր ե զդակդ։

ՀԱԿՈԲ. — (Կնոջը)։ Յես նրան մի վատ բան չասացի, անուշ ջան. ի՞նչ իրավունքով խփեց նա ինձ։ Մեղավորը նրա վորդին ե... յես ի՞նչ եմ արել նրան։ Յես կանչեցի իմ տեր Հիսու-սիս, բայց նա չեկավ ինձ ոգնութլան, յերեկի հավատը մե-ռած ե իմ մեջ։

ՍԵՐՈԲ. — Յես կգամ քեզ ոգնութլան, յես. եղ բանը նրանց եժան չի նստիլ։

ՀԱԿՈԲ. — Դու ելի յեկել ես։ Կորիր, մի յերեալ աչքիս։ Իմ վոր-դին Ներսեսն ե (Համբաւում ե երան)։ Դու, իմ սիրելիս, ինչպես ես հիմա։

ՆԵՐՍԵՍ. — Սիրիր և նրան. նա խոսք ե տալիս լավ մարդ դառնա։

**ՀԱԿՈԲ.**—Հա: Աստված ներեք քեզ... չե՞ վոր դու յել (համբուրում  
և Սերոբին)... իմ արլունս ես:

**ՄԵՐՈԲ.**—(Ս. Յերը սրբելով): Ե՞ս... չեմ կարող աանել եղ վիրա-  
վորանքը, պետք և վերջացնել: (Գնաց ձախ):

## S E U H L 15

Աննա, Մարքա, Ներսես, Մինաս յել Հակոբ

**ՄԻՒԱՄ.**—Ինձ չե՞ս ճանաչում, վարպետ:

**ՀԱԿՈԲ.**—Հա հա հա: Սա աղքատաներին լավացնում ե, բայց փող  
չի վերցնում, ասում ե, «միա, յերբ հարստանաք, կվճարեք»:  
Ապա ինչժմ չես կարողանում սրան լավացնել: Ախր չե՞ վոր  
սա յե իմ տան սլունը. չե՞ վոր սա պետք և վառ պահի իմ  
տան կրակը, ես մարզող ճրագը:

**ՄԻՒԱՄ.**—Նա կլավանա. աստված վողորմած ե: Եգուց մենք ճա-  
նապարհվում ենք գյուղ:

**ՀԱԿՈԲ.**—Հա: Տար նրան, լավ մտիկ արա, լավացրու նրան, թե  
չե նա հստեղ կմեռնի, չի ապրիլ: (Հանկարծ երա զեմբը  
փայլում ե յեվ վորպես թե ծիծաղելով): Բայց մտիկ արա,  
լիթե նա մեռնի, չգաս, ինձ չասես, ևաստվածանով միսիթար-  
վես, ծերունիք: Չե, չե ինձ բնչ, թե նա կմեռնի: Դու գնա-  
միսիթարությունը նրան ասա: Ինձ բնչ: Հմ, նրանն եր,  
նրանն ել դառավի: Յես վորդի չունեմ: Յես ինքս վորդին եմ  
իմ տեր Հիսուսի: Աղոթք անենք:

**ՄԻՒԱՄ.**—Չե, վարպետ, սպասիր:

**ՆԵՐՄԵԾ.**—Հայրիկ, յես իմ աշքով ուզում եմ տեսնել: Որհնիր,  
Մինասը արդեն մեր Մարթալի նշանածն ե:

**ՀԱԿՈԲ.**—Ճշմարիտ ե: Աւրեմն դուք լսեցիք խեղճ ծերուկիս խոս-  
քը (Մարքա յեվ Մինաս մոտենում են): Անուշ-ջան. որհ-  
նենք նրանց:

**ՆԵՐՄԵԾ.**—Ախ, աստված, ա: (Թռենում ե սիրտը յեվ քաւկինա-  
կով բերանը):

**ԱՆՆԱ.**—(Հանկարծ): Յերեխաս ձեռքից գնաց:

**ՄԻՒԱՄ.**—Վոչինչ. մի՛ վախեք: Եստեղ ցուրտ ե, պետք և նրան-  
տանել ներս: (Թգնում ե Յերան):

**ՀԱԿՈԲ.**—Մի թողեք, լերեխան մըսում ե: Տարեք ներս: (Մինաս  
յեվ Մարքա անում են Ներսեսին, վորդ նեռիում նկա-

գում և սաստիկ արյունոս բաօկինակ: Աննան զռան մոռ  
հեծկլտում ե): Աննա, դու լաց ես լինում: Ասա որհնլալ լինի  
աստծո կամքը:  
ԱՆՆԱ.—(Լացով)... Որհնլալ լինի աստծո կամքը:  
ՀԱԿՈԲ.—Հա. եղ լավ ե: Որհնլալ լինի նրա կամքը:

## S E U Ւ L 16

Հակոբ, Աննա յեկ Սերոբ

(Քեմի յետեվից լսվում է Աւելիսանգրի ձայնը), «Յես քեզ  
ասում եմ, բաց թող ինձ... սրիկա»: (Սերոբի ձայնը). «Մե-  
ռիր շուն շան վորդի»: (Աւելիսանգրի ձայնը): «Ա, ոգնեցեք...  
մա»: (Սերոբը մտնում է ձախից, արյունոս զաւույնը ձեռին):  
ԱՆՆԱ.—Տեր աստված, եղ ինչ ե, ի՞նչ է պատահել,  
ՍԵՐՈԲ.—Վոչինչ. յես մաքրեցի մեր տան պատիվը:  
ՀԱԿՈԲ.—(Վորպես թե չըմբռնելով իր ոռւրջը կատարվածը), Ա-  
ղոթք անենք... (չոքում ե) աղոթք անենք:  
Պայս ձայների վրա Մինաս յեկ Մարքա այժերը բանած հայտ-  
նվում են ազ զռան մեջ: Պատկեր. վարագույրը հան-  
գարս իշնում ե):

---



# **ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ**

III Տպագրություն

## ԴՈՐՁ-ԱՊ ԱՆՇԻՆ-Ք

ԱԲՐԱՀԱՄ ԱՊԵՐ—Հարուստ վաճառական.

ԽՈԶԱ ԱՐԶՈՒՄԱՆ—գեղական.

ԱՆԹԱՌԱՄ—Նրա կինը, տներում բանող,

ՄԿԻՆ—Արրահամի ծառան.

ԲԵՄԸ ՆԵՐԿԱՅԱԳՅՆՈՒՄ և կեսասիական կեսյեվրոպական  
ճաշակով դահլիճ. Մեզտեղ, ազ յեվ ծախս դռներ:

---

## ՏԵՍԻԼ 1.

Աբրահամ յեկ Մկին

**ԱԲՐԱՀԱՄ ԵԿ ՄԿԻՆ**.—Տեսնում ես, Մկին, առանց կնկա տունը ինչ դժոխութիւն իւն նման։ Պատերը ինձ ուտում են։ Յես ասացի բարիկենդան ե, Շուշանը ալսոր կփոշմանի, յետ կզա տուն, բայց չե, սխալվում եմ, Եհ, շատ ել հոգս չեմ անիլ Գնամ մի լավ ձուկ առնեմ բերեմ, խորովիր ուտեմ՝ կարմիր գինին խմեմ, վնաս չունի, թող այս մեկ բարիկենդաններս ել ալսպես անցնի, Ալստեղ լինես։ (Գնում ե միջի գոնով)։

**ՄԿԻՆ**.—Խեղճ ապեր, Ղուշըտ<sup>1</sup> զափանան<sup>2</sup> փախալ ա, Թնացալ ես երվիլով։ Ինձ հարցունես, մեղա ասսու, ուզում ամ ասամ լափ<sup>3</sup> տեղն ա։ Մարթս պետկանամ պանի լավ ֆիքքիր<sup>4</sup> անի։ Ալշան<sup>5</sup> լավ պտուղ ա, համա զեն<sup>6</sup> նրա չհասածը ախնա<sup>7</sup> մին զահրմար<sup>8</sup>։ Յուրիուշ պան ա նրա հասածը. Վոր տինիմ ես երկու ազգիտ<sup>9</sup> արանքըմը հուպտամ, չրախկոցը գեռքն աւ պացրանըմ։ Տյու ապերս ասա ինքիտ մեծ հորս յաշըմը<sup>11</sup>, քինացալ ես մին կնիգ ես առալ քի վոտը հալա հերու չե մեկալ տարի փալիզին<sup>12</sup> տասնութումը տիրավ։ Իլիր Մկինի պես։ Ինքիս քամնոխտ տարեկան, ախչիգ ամ սիրալ լերեսնոխտ տարեկան։ Դե ուղորթ ա, եքուցվան որը անանց<sup>13</sup> կնիգի աթանց<sup>14</sup> (իրան ցույց օալով) տղին կթողնի, քու Շուշանիտ պես հերանց տուն կփախչի։ Հար<sup>15</sup> պանիս ալ աթանց ա։ Մտկով, խելքով, խիտրութունով<sup>16</sup>, ջուզվալլաղութունով<sup>17</sup>։ (Յիւրելով)։ Ուժ. պերանս հախ ա<sup>18</sup> ուրախ ախուըմ, համա<sup>19</sup> սըրտըս մըխկըտամ ա։ Քու հոր տունիգի բարբադ<sup>20</sup> իլի սեր։ Տյուիզիթ<sup>21</sup> մին ալամաթ<sup>22</sup> ցավ ես։ Քե-

1 Թռչունդ. 2 վանդակից. 3 քուրովին. 4 մտածունը. 5 շուշը. 6 բայց գե. 7 խկական. 8 թույն. 9 աղորիթ առամիդ. 10 յերկինք ե. 11 հասակումը. 12 աշ-նանը. 13 այսպես. 14 այնպես. 15 ամեն. 16 խորամանկությամբ. 17 չարամտությամբ. 18 թեե. 19 բայց. 20 լերակ. 21 դուիզի. 22 գերբնական.

զի տեսնամ քի դարդամահ<sup>1</sup> իլես. սատկես, տմկես, չորանաս, տիղ իլես կպչես գուվարան<sup>2</sup>, ալ պուք չի կաս. Աշի<sup>3</sup> աջաբ<sup>4</sup> խաթի<sup>5</sup> չընդմնք. Տրանա առաջ լես ի սիրահարվող-ների վերա ծծաղըմ, հիմիգ քի ինձ ամ միտիգ անըմ, լափ ծեր արե, ծըծաղ քի չե, խեխչս ա կամ ինձ, խեխչս, Ախր Մկիճը հնվ, սերը հով. Մկիչը հորդե, Անթառանը հորդե. Տես պանի հորդե ա հասալ, քի Անթառանիս վերա շարա-դրանք ամ կիրալ.

## ՏԵՍԻԼ 2

Մկին յեվ Անրառամ

**ԱՆԹԱՌԱՄ.**—(Միշի գոնով ներս գալով): Բարի յերեկո տե-սանք, ալ Մկիճ.

**ՄԿԻՃ.**—Պարյուկուուն, ասսու պարին (կողմ). Ուրախթունաս սըրտարս պլաոց տուրավ. Խեր<sup>6</sup> իլի, ալ Անթառան. Աս ժա-մաժամքին ալի հինչ կա.

**ԱՆԹԱՌԱՄ.**—Ուրախություն ե. աչքդ լուս (ծիծաղում ե):

**ՄԿԻՃ.**—Լսող աստոծը քեզիգին լիսով պահի. Ծըծաղըմ Բո:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Բարիկենդան ե, ուրախ եմ,

**ՄԿԻՃ.**—Աստոծ քեզի պարի կենթան պահի.

**ԱՆԹԱՌԱՄ.**—Ապերը տանն ե:

**ՄԿԻՃ.**—Քինացալ ա ծյուգն առնի. Հարաս<sup>7</sup> կիկա<sup>8</sup>. (Պառուզա), Անթառամն:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Հըը<sup>9</sup>:

**ՄԿԻՃ.**—Ախր յես սպասիլան մեռա:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Ուհ, Յերը ենք պրծնելու քո ձեռքիցդ:

**ՄԿԻՃ.**—Մի տանջիլ, խեխճ ամ, մեխկ ամ, տիվեր աստոծ կա:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Եհ, չեմ իմանում գու ել խելքդ ինչ ես տանել տվել:

**ՄԿԻՃ.**—Խաչ իմ ցեքիս չի. Ինձանա իլի չամմանըմ<sup>10</sup> քի հինչ կանամ: (Անթառամ ծիծաղում ե): Մի ծըծաղիլ. Տա սեր ա. տա զարաֆաթ<sup>11</sup> չի. Միրողը խելքն ալ տանիլ կտա, լուրան ալ: Տես ալ պանի աստոծ հորդե<sup>12</sup> ա հասացուրալ քի, մոտիտա ի-րեսիս արուռը<sup>13</sup> մըռացալ ամ: Ալ մեռուն, ամոթ, հարկ չի մնացալ ինձ ետի<sup>14</sup>:

<sup>1</sup> Ցագամահ. <sup>2</sup> պատից. <sup>3</sup> այ մարդ. <sup>4</sup> լազ. <sup>5</sup> զժբախտության. <sup>6</sup> բարի.

<sup>7</sup> հորես կդա. <sup>8</sup> չեմ իմանում. <sup>9</sup> կատակ. <sup>10</sup> վորտեղ ե. <sup>11</sup> ամոթը. <sup>12</sup> համար.

**ԱՆԹԱՌԱՄ**.—Յես չեմ իմանում դու ինձանում ի՞նչ ես գտել։  
Հաղարներով տներում աղջիկներ կան պառաված, քո աչքունց  
հնաց ինձ ե տեսելի Փառք աստծո, փեսացուն ցերեկը ճրա-  
գով են վնատուում հու։

**ՄԿԻՃ**.—Յես ալ քեզ ամ ճրագով շուռ<sup>1</sup> կամ ալի<sup>2</sup>, Էլան տեղով  
մին ոսկի, վոր իմ սերս քեզիգին ա ճոկալ, Հինչ անամ։

**ԱՆԹԱՌԱՄ**.—Տեսնող խոսողները ի՞նչ կասեն։

**ՄԿԻՃ**.—Առաջինի պանի թաքուն կլոխ կպերանք։ Երկուինջի-  
նի<sup>3</sup> քի ասսանա թաքուն չի, բանդիան<sup>4</sup> ամ վախիլլու։ Ա-  
սըմ ա չախկալան<sup>5</sup> բոլուգ<sup>6</sup> ասլան<sup>7</sup> վար<sup>8</sup>։

**ԱՆԹԱՌԱՄ**.—Խմանում ես, վոր մարդիս լեզուն չար ե լինում և  
շատ անգամ թացն ել չորի կրակով ե երվում, Մկիճ։

**ՄԿԻՃ**.—Հարկս հարկաց, պատիվս արժանավորաց։ Հասկանըմ  
ամ մըտկըտ։ Լափ արխելին<sup>9</sup> իլի քի, նա ալ իմ ցեքիս։  
(Պառւզա)։ Անթառան։

**ԱՆԹԱՌԱՄ**.—Խոնչ կա։

**ՄԿԻՃ**.—Ախր քեզ հետի<sup>10</sup> մին շարադրանք ամ կիրալ։

**ԱՆԹԱՌԱՄ**.—Հիմի ամեն մի ծառա յել շարադրող ե դարձել։ Յե-  
թե դու յել Մարտիրոսենց ծառալի նման ես գրել, թող մնա։

**ՄԿԻՃ**.—Նա հինչի<sup>11</sup> վերա ա կիրալ։

**ԱՆԹԱՌԱՄ**.—Մխտորի։

**ՄԿԻՃ**.—(Միծաղից բուլանալով), Բա քու տունիգիդ աստոծ շի-  
նի, Անթառան աղջիկ, Աքա<sup>12</sup> բաս սխտորի մասին ալ պան-  
կիկիրան։ Հա, հա, հա։ Իմիգի<sup>13</sup> մին ալամաթ պանալն։

**ԱՆԹԱՌԱՄ**.—Դե մի կարգա տեսնենք։

**ՄԿԻՃ**.—Նա յալ իմ ցեքիս։ (Ձեռթերեն ու բիբլ սրբելով գրպա-  
նից հանում ե մի բուզը)։ Անգոջ<sup>14</sup> տիր տես հինչ սըրտի-  
կանձ խոսկեր ա։ (Սկսում ե կարգալ)

«Մազերտ սե հյուլոր հյուլոր<sup>15</sup>  
պրոշներտ կըլոր կըլոր։  
Ժամի տուռնան<sup>16</sup> լեն ուսերիտ,  
մատաղ արա, աս<sup>17</sup> Մկիճիտ։

**Անթառանս հավ կիսաշի,**  
**հորի մեշան ճյուր կքաշի։**

<sup>1</sup>Ման. <sup>2</sup>Ելի. <sup>3</sup>յերկորդ. <sup>4</sup>մարգկանցից. <sup>5</sup>,<sup>6</sup>,<sup>7</sup>,<sup>8</sup> աղվ եսից մեծ տայուժ կա-  
<sup>9</sup> միամիտ. <sup>10</sup>քեզ համար. <sup>11</sup>«աքաց» բառի կընտառած, աղջիկ. <sup>12</sup> քնքացըրած-  
«իմ» բառը, իմիկ. <sup>13</sup> ականջ. <sup>14</sup> ոլոր. <sup>15</sup> զանից. <sup>16</sup> այս։

Հաստ կռները ուըրտ կմաշի,  
 մատաղ կանի աս Մկիճիտ:  
 Տափը սիպտագ նախշ ունքերիտ.  
 շեկ մազերով խելունք կլախտ.  
 տեղին խունգի երգան՝ վիզիտ,  
 թող փթաթվի աս Մկիճիտ:  
 Ճակատա ա ոսկի հելլի<sup>2</sup>,  
 յես Մեժլում ամ, տլու մին Լելլի<sup>3</sup>,  
 վոր քեղ հազար սիրող իլի,  
 ցեքտ մեկնիր աս Մկիճիտ:  
 Ցես ծեր բախչին<sup>4</sup> բաղ<sup>5</sup> ամ ասըմ,  
 Ցեկ քաշանք դամաղ ամ ասըմ.  
 զլարգարի պես հաղ<sup>6</sup> ամ ասըմ.  
 ցեք մի քցիլ աս Մկիճիտ:  
 Մասիլ Մկիճ ունքտ ծուռ ա,  
 տյու յեկ սրտիս միտիգ արա,  
 աստոծ կանչիր տղոթք արա,  
 արժանանաս աս Մկիճիտ։

Հինչպիս եր։  
 ԱՆԹԱՌԱՄ. — Լավ եր։ Բայց մի տեղ մազերիս սև ես ասում, մյուս  
 տեղ շեկ։  
 ՄԿԻՃ. — Շատ ալ խըթինին չան քինալ Սերան<sup>7</sup> քոռացան  
 մարթը սև սիպտագ կկարի<sup>8</sup> ճոկի<sup>9</sup>լ Ծան<sup>10</sup> ալ տիրալ ամ։  
 Ուզում ես մին զիմզիմա<sup>11</sup> անամ։  
 ԱՆԹԱՌԱՄ. — Բարիկենդան ե, լավ կլինի! Ցերգիր մին ուրախա-  
 նանք! (Միծաղում ե).  
 ՄԿԻՃ. — «Ճակատա ա ոսկի հելլի, յես մին Մեժլում, տլու մին Լել-  
 լի...» (Լսվում ե Աբրահամի հազորի ձայնը),  
 ԱՆԹԱՌԱՄ. — Վալ, ապերը յեկավ։

### S E U H L 3

Մկիճ, Աբրահամ յեկ Անբառամ

ԱԲՐԱՀԱՄ. — (Մօնում ե միջի գոթից. ձուկը ձեռին): Զայնդ  
 անսպառ, ալ ուստաց<sup>12</sup> Մկիճ, ձայնդ անսպառ։

<sup>1</sup> Ցերկար. <sup>2</sup> Հայելի. <sup>3</sup> պարսկական «լելլի» Մեժլում պոյեմայի հելոսներ։  
<sup>4</sup> պարտեզին. <sup>5</sup> այզի. <sup>6</sup> յերգ. <sup>7</sup> սիրուր. <sup>8</sup> կարող ե. <sup>9</sup> ձայն, յեղանակ. <sup>10</sup> հան-  
 դարտ յերգել նվազել զվարճանալ. <sup>11</sup> գարզեն։

**ՄԿԻԾ.**—(**Կողմ**): Խստե ան ասալ քի «սոհբաթին չիրին վախ-  
տընդա, մոլթանի գլաւդի քի ալլա սախլասուն»: Ներողու-  
թուն, ապեր:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Բան չունես: Անթառամ, բարի լինի, ի՞նչ կա:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Մարտիրոս ապերը խնդրեց շնորհ բերեք իրանց  
մոռ:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Ի՞նչ կա:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Վայինչ. բարիկենդան ե, այնտեղ պաս բռնելու:

**ԱԲՐԱՀԱՄ.**—(**Ուրախ**) Ուրեմն կնիկս ել այնտեղ և լինելու:

**ԱՆԹԱՌԱՄ.**—Դե վոր իմացաք, ել ի՞նչ ասեմ:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Դե սա մի փոքր շուտ ասա ելի: Ալդ լուրիդ պա-  
տասխանը մին աչքալուսի լել յիս քեզ ասեմ: Քո յել աչքդ  
լուս, մարդդ յեկել ե:

**ՄԿԻԾ.**—(**Ճրագը վառելով յեվ օնդափոխելով**): Պարյուղուն  
ապերիս:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Ասածո բարին: Տես ալս ձուկը ի՞նչպեսն ե:

**ՄԿԻԾ.**—(**Հոռ անելով**): Փահ. շատ զանազանն ա:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Դե, Մկիճ, ալդ լավ յեղավ, կտանենք Մարտիրոսանց  
տուն, այնտեղ կուտենք: Ուրեմն այդպիս, պասը այնտեղ  
կըսնենք, մեր տան կրացենք: (**Մկիճ ձուկը օանում և**  
**գնում մի կողմ**): Ա՛ Մկիճ. հենց իմանաս մի քիչ կաղում ես:

**ՄԿԻԾ.**—Հրամերես, ապեր. վոսս բլուղուրմիշ ա՞ իլալ:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Խոսքը ժամանակին կգա: Անցյալ տարի բարի կեն-  
դանին չե՞ր, վոր կարծեմ ելի մի այդպիսի բան պատահեց  
քեզ:

**ՄԿԻԾ.**—Հա սալդաթի կոե՞վը<sup>3</sup>:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Ի՞նչ կոիվ:

**ՄԿԻԾ.**—Բոնդուրի<sup>4</sup> կոեվը:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Հա. պատմիր տեսնենք նա ինչպես բան եր:

**ՄԿԻԾ.**—Նա յալ իմ ցեքիս Ուռուսը տասան<sup>5</sup> եր կամ, թուրքը  
տանան<sup>6</sup>: Մեք ալ մեր դուվարի<sup>7</sup> տակին թամաշալինք<sup>8</sup>  
անըմ: Թուրքը քի շատացավ, զոռ առավ, ուռուսը փախավ:  
Ուռուսը փախավ, մեք խառնվեցինք: Մին թուրքի կնիդ  
վրաս յեկավ, յես իզինքիս<sup>9</sup> յետ քաշեցի, թուրքի կնիդի  
մոտեցավ:

1 Առակ. «Խոսակցության քաղցր ժամանակ մոլթանին մտավ թե՝ բարի  
ընկայ», 2 սայթաքել. 3 1881 թվի հայտնի թուրք և ոռու ամբոխի կամին.  
4 տակառագործի. 5 այս կողմից. 6 այն կողմից. 7 պատի. 8 հանդիսատես ելինք.  
9 անձան:

**ԱԲՐԱՀԱՄՄ.—Տեսնում ես, Անթառամ, ինչ տեսակ կնիկարմատ եւ լեղել:**

**ՄԿԻՃ.—Չալըմ<sup>1</sup> կնիկ եր: Համամչի<sup>2</sup> Խանըմը նրա մոտին, մուկնի հաքի: Մոտացմավ դեռշիս<sup>3</sup> տախտագին մին լափաշկալ:<sup>4</sup> Մեշկըս<sup>5</sup> տուրի դուվարին, վոտս պարզրացուրի քի թափիդով<sup>6</sup> փորին կուպցունամ, վոտս փոնեց: Վոտս փոնեց, հինչ փոնեց: Քաջեց, քաշեց, մին խելպագ<sup>7</sup> տեղ տարավ. յես ալ ան մին վոտիս վերա տընդիլ<sup>8</sup> տալով, տընդիլի տալով—քինամ ամ: Բիրդան<sup>9</sup> վոտս պարզրացրուց կպցրուց լափ քիթիւ: Բիրդան քի քուռուշ չտուրավ, ինքի փախավ, յես տունդուռուղիս<sup>10</sup> վերա կպա տափին:**

**ԱՆԹԱՌԱՄՄ.—(Պասիթկ ծիծաղելով): Ինչ աներեսն եւ լեղել:**

**ԱԲՐԱՀԱՄՄ.—(Նույնպես ծիծաղելով): Հետո, հետո:**

**ՄԿԻՃ.—Կոխքս հախսան<sup>11</sup> կոտրվեց, համան<sup>12</sup> վեր կացա տրա քամագան<sup>13</sup> մին սալբանդ<sup>14</sup>: Չումուշկը թողացավ փախավ: Յես չումուշկը վեկալա, մին սալբաթ փոնեց բողազաս<sup>15</sup>:**

**ԱԲՐԱՀԱՄՄ.—Նմ ինչժա:**

**ՄԿԻՃ.—Յես ալ հանց նա յամ ասըմ քի, ագանամ<sup>16</sup> թուրքի գյոււս ամ<sup>17</sup>, ան կնիգի ինձի հինչի շիքաստ<sup>18</sup> արավ. ագանամ ուռուսի գյուս ամ, աս սալբաթը ինձի հինչի<sup>19</sup> ա խեխտը: Հարնախսան<sup>20</sup>, ան որան տասնա կոխկս աթանց<sup>21</sup> զլուգյուրդ<sup>22</sup> մաց: Ապեր աս կնիկարմատին հեռացրու, սեկրետ ունամ:**

**ԱԲՐԱՀԱՄՄ.—(Անքառամբին): Գնա մլուս սենյակ: (Անքառամը զնում եւ ազ գոնով): Ասա տեսնեմ:**

## ՏԵՍԻԼ 4

Աբրահամ յել Մկիճ.

**ՄԿԻՃ.—Ապեր, ավետարանան կլոխտ լմվ ա տյուս կամ:**

**ԱԲՐԱՀԱՄՄ.—Ավետարանը այնպես գիտեմ, վոր յեթե մին մախաթես յերեսից անց կացնես մինչ մլուս յերեսը, յես կիմանամ թե Մատթեոսի վոր գլխով ե անցել, Մարկոսի վոր տնով, Ղուկասի վոր տառով: Ապա դու ինչպես ելիր ճանաչել ապերիդ:**

<sup>1</sup> Քաջ. <sup>2</sup> բաղնիսպան. <sup>3</sup> կըքքիս. <sup>4</sup> ապտակ. <sup>5</sup> մեջքս. <sup>6</sup> քացիկով. <sup>7</sup> բավականի. <sup>8</sup> մի վոտի վըս վոստոստելով. <sup>9</sup> հանկարծ. <sup>10</sup> յետելիս. <sup>11</sup> թեե. <sup>12</sup> բայց. <sup>12</sup> յետեկց. <sup>14</sup> սոլ. <sup>15</sup> շնափողիցս. <sup>16</sup> յեթե. <sup>17</sup> կողմ եմ. <sup>18</sup> անդամալույծ. <sup>19</sup> ինչեն. <sup>20</sup> այսպես. <sup>21</sup> զրկված:

**ՄԿԻԾ.**—Բալիլա<sup>1</sup>:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Բալց դու փորացավդ չասացիր:

**ՄԿԻԾ.**—Չիմ ալ<sup>2</sup> մեղավոր մահկանացու անք:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Սա խելք խոսք եր:

**ՄԿԻԾ.**—Ապեր, իմ ցավս մին ալամաթ ցավ ա: Համ քաղցր ա,  
համ տառնը իմ ցավս, ապեր, մին անանց ցավ ա քի.  
հինչքան յուրիուշի չամ ասըս հինչքան թաքուն ամ պա-  
հըմ, անքան հոքիս փառավորվըմա, սըրտըս ուռչում: Հպար-  
դանըմ ամ. կոռողանըմ ամ. ալ չամ ուզում քի մին դանա<sup>3</sup>  
մարթի իրես տեսնամ: Բաղ<sup>4</sup> վախտ ալ ուզում ամ ինձ ծո-  
վը քիցամ խեխտամ: Համա վախըմ ամ կան մելիդիս<sup>5</sup> վե-  
րա կաննան վոտով կուպցունան, ասան, տրա ըորիսին  
մտիգ արա, տա ալ ուսում առածների ջարգըն ա<sup>6</sup> ուզացալ  
ընգնի: Վախըմ ամ ինձի տնազ անան:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Մկիճ, ենպես բան խոսի, վոր լսողն ել ասի, թե սա  
բարիկենդանի խոսակցութիւնն ե: Դու յեկ ինձ քո փորա-  
ցավդ ասա:

**ՄԿԻԾ.**—Իրեսս չի կամ:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Ասա ասում եմ: Ուրեմն յես քեզ համար ով եմ:

**ՄԿԻԾ.**—Ապեր, յես ուզում ամ մի փիստիկ գիֆութիւնն ալ յես  
անամ: Ասսանա թաքուն չի, քեզանա հինչ թաքուն: Ու-  
զում ամ տնոորվամ:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Այ աստված շնորհավոր անի, շատ ել լավ ես միտք  
արել. խեղճ տերտերները մեռել թաղելուց ճաքեցին: Բառ  
հարսնացնեւ ով լինի:

**ՄԿԻԾ.**—Յես իմ չափս շըմացողը չամ: Իմ սիրածս Անթառանն ա:

**ԱԲՐԱՀԱՄ.**—(*Փոքրկացնում ե յեվ իրան զապում*): Ի՞նչ, ով:

**ՄԿԻԾ.**—Իսկի մի՛ ծըծաղիլ. տա սեր ա. տա զարաֆաթ<sup>7</sup> չի:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Ի՞նչ կտաս ամեն բան իմ ձեռքովս զլուի բերեմ,  
քեզ պսակեմ:

**ՄԿԻԾ.**—Այս ապեր. վոտերտ ճյուր կանամ կխմամ, մատերս ճրաք  
կանամ առաչիտ կվառամ: Եշտ կիլամ. հորդե ուզես, ինզե  
կտպի: Համա վախս տա յա քի<sup>8</sup> հարսնացուս սազլաս<sup>9</sup> չիլի:

**ԱԲՐԱՀԱՄ.**—Յես Աբրահամը չեմ, յեթե հենց ես ըոպելիս հարս-  
նացվիդ չհամոզացնեմ և հենց ես գիշեր չպսակեմ քեզ:

**ՄԿԻԾ.**—Ապեր, հարսնանիքիս հինչքան միս կուտվի. մին փութ  
ըոլ <sup>10</sup>,

<sup>1</sup> իհարկե. <sup>2</sup> ամենքս ել. <sup>3</sup> հատ. <sup>4</sup> յերբեմն. <sup>5</sup> դիակիս. <sup>6</sup> շարքն ե. <sup>7</sup> կատակ.

<sup>8</sup> վոր. <sup>9</sup> համաձայն. <sup>10</sup> բավական ե:

**ԱԲՐԱՀԱՄ**. — Ի՞նչ ես ասում. վոր չուտեն, նա լիլ շատ եւ  
ՄԿԻՃ. — (Թիզ գնում եւ յեվ հետ գտիս). Ախր մին պան ամ ֆի-  
քիր<sup>1</sup> անըմ:

**ԱԲՐԱՀԱՄ**. — Հը:

ՄԿԻՃ. — Տիւ ասըմ ես «մին փութը ագանամ չուտան, նա լալ  
շատ ա». ախր լիս վախըմ ամ ուտան, նա լալ քիչ իլի:

**ԱԲՐԱՀԱՄ**. — Դե. ասած դու, նա լալիմ ձեռքիս:

ՄԿԻՃ. — Զան ապեր, ջան, ջան. Դե միտցածը տա քեզ կասի:  
(Թուղթը ուղիս և Թբրահամին յեվ գնում եւ ձախ):

**ԱԲՐԱՀԱՄ**. — (Կանչում ե): Անթառամ:

## S E U H L 5

Աբրահամ յեվ Անթառամ

(Մտնում ե ազ կողմից)

**ԱԲՐԱՀԱՄ**. — (Սի փոքր բղբին նայում ե, ծիծառում, յեվ ցույց  
օտիս Յ. նրանամին): Ալդ ի՞նչ եւ:

**ԱՆԹԱՌԱՄ**. — Ինչպես ե համարձակվել ալդ աներեսը...

